Ձաղածանակ a. exposé à la risée, moqué; — առնել, exposer à la risée de tout le monde, donner en spectacle.

Ձաղակոծ առնեմ va. battre, souffleter.

Ձաղանք, նաց s. risée, dérision, moquerie, objet de dérision; V. Ձաղկանք; իծաղր եւ իծաղանս լինել V. Ձաղ լինիմ.

Ձաղաւել s. balai de bouleau, de bruyère.

Ձաղեմ, եցի va. rire, se moquer de qn., le railler, le tourner en ridicule, se jouer de lui; conduire en triomphe; triompher, vaincre; — զոք իֆանդես յաղթանակի, triompher de qn.

Ձաղիչ s. moqueur.

Ձաղկ, ի, աւ s. verge, bâton.

Ձաղկահեր, Ձաղկամազ adj. qui a les cheveux plats.

Ձաղկանք, նաց s. verges, flagellation, fustigation, discipline.

Ձաղկեմ, եցի va. fustiger, flageller, discipliner, fouetter.

Ձաղութիւն, Ձաղումն s. dérision, moquerie, risée; triomphe; ձաղումն յաղթութեան առնել, triompher.

Ձայն, ից s. voix; son, cri; ton; bruit, rumeur; parole, langage, langue, terme, mot; — թռչնոց, chant des oiseaux; նուաղեալ կերկերեալ ou կերկեր՝ քաղցր ou քաղցրաբարբառ՝ ախորժ՝ անախորժ՝ զօրաւոր՝ սաստկայոյզ՝ մեծավայելուչ՝ դողդոջ՝ թրթռուն ակար —, voix défaillante, rauque, douce, agréable, désagréable, forte, émue, majestueuse, tremblante, chevrotante, faible; — ցնծութեան, cri, acclamation de joie; — առնել՝ առնուլ՝ արկանել՝ արձակել՝ բառնալ, pousser ou jeter des cris, s'écrier, crier; — ածել, faire entendre une voix, un cri,

crier; աղաղակել իձայն մեծ, jeter un grand cri, des hauts cris, crier à gorge déployée; ի— բարձր, à haute voix; — տալ, crier, apostropher, parler; défier; — տալ մարտի, déclarer la guerre, se déclarer contre; — տալ խիզախել ընդդէմ երկնից, menacer le ciel; — աղաղակի, cri, plainte; — նորա գելաւ, la voix lui manqua; բարձրացուցանել՝ ցածուցանել զ—, élever, baisser la voix; բարձրացուցանել զ— աղաղակի, élever la voix, ses cris; — բարձեալ գոչել, s'écrier; *—ը քաշել, se taire; prendre son parti, se résigner; *—ը մարած է, il a la voix éteinte, cassée; *—ին մարիլը, extinction de voix; *—ը բաց է՝ տեղն է, il est en voix; *—ը գոցուած է, il n'est pas en voix; *— ձանել, faire entendre une voix, un cri, crier, faire du bruit.

Ձայնական a. vocal; tonique; —երաժշտութիւն, musique vocale.

Ձայնակից s. qui unit sa voix, ses accords, qui accompagne; qui est d'accord, unanime; gram. consonne; — լինել, former un accord des sons, être d'accord (en parlant des instruments); exécuter un concert, une symphonie; être d'accord, unanime, s'accorder.

Ձայնակցիմ V. Ձայնակից լինիմ.

Ձայնակցութիւն s. accord de plusieurs voix, concert, symphonie; accord.

Ձայնամփոփ s. abat-voix.

Ձայնաչափ, ի sm. sonomètre.

Ձայնապետ, ագ s. premier chantre.

Ձայնատու, ագ a. qui fait entendre un son, qui crie, qui résonne; crieur; réveilleur; — լինել, faire entendre un son, crier, résonner, renvoyer le son; crier, défier.

Ձայնատուր V. Ձայնատու; — լինել, défier qn. au combat, lui jeter le gant, le provoquer; —ք, bruit, fracas, retentissement.

Ձայնարգել s. abat-voix.

Ձայնարկեմ, եցի vn. jeter des cris, crier, adresser la parole.

Ձայնարկու, ագ s. a. qui jette des cris; crieur, pleureur, qui déplore.

Ձայնարկութիւն sm. cri, plainte; interjection.

Ձայնաւոր, ագ a. vocal; s. gram. voyelle.

Ձայնեմ, եցի va. faire entendre une voix, élever la voix, crier; prononcer, dire, exprimer, adresser la parole; appeler; nommer; խրախոյս —, encourager.

Ձայնիկ s. petite voix.

Ձայնորդ, ագ s. gram. consonne.

Ձանձախարիւ s. couleur de datte, couleur rouge.

Ձանձիր a. ennuyeux, im-

portun, fastidieux; — առնել, ennuyer, importuner.

Ձանձրալի, Ձանձրանալի a. ennuyeux, fastidieux.

Ձանձրանամ, ացայ vn. s'ennuyer, se lasser.

Ձանձրացեալ a. ennuyé, las.

Ձանձրացկոտ a. qui s'ennuie facilement.

Ձանձրացուցանեմ, ուցի va. ennuyer, lasser, causer de l'ennui.

Ձանձրոյթ s. ennui; a. ennuyeux.

Ձանձրութիւն s. ennui; — պատճառել՝ տալ, causer ou donner de l'ennui.

Ձառադէմ a. qui a une figure hideuse, horrible.

Ձար, ի s. crin, poil; czar.

Ձարի a. poilu.

Ձարխոտ, ոյ s. adiante, capillaire; — վայրի, fougère.

Ձարմաղ s. tamis.

Ձարուխի sf. czarine.

Ձգական a. attractif; attrayant; tendu.

Ձգանաւոր a. tendineux.

Ձգանք, նաց s. action de tendre, d'étendre; étendage, endroit à étendre; tendon; bretelle.

Ձգարան, ի s. étendage, assemblage des cordes tendues; corde.

Ձգեմ, եցի va. tendre, étendre; jeter, lancer, darder; tirer; attirer, s'attirer, affrioler; traîner, entraîner, ramener; sucer, humer, aspirer; allonger; *laisser; — զոդ, respirer l'air; յանձն — զցասումն ուրուք, attirer sur soi ou encourir la colère de qn., s'y exposer; յինքն —, s'attirer, tirer à soi, attirer sur soi; — զձեռն, tendre, étendre la main; — զնետս, tirer de l'arc, décocher des flèches; — զաղեղն, tendre l'arc; — զսուրն, allonger un coup d'épée; — զկեանս, passer la vie; — իկորուստ, entraîner à la perte; — սուր իկողս ուրուք V. Սուր; — իմ vn. tendre, s'étendre, pencher, se porter; traîner, se traîner; durer; իմի կէտ նպատակի ձգի ամենայն, tout concourt à la même fin; ձգեալ տարաճանիլ, s'étendre, se répandre; ձգեցաւ ընդ ամս տասն, dura dix ans; ընդ սակաւ ամս՝ ժամանակ ձգեցաւ, il a peu duré, il a duré peu de temps; — իբանս ուրուք, être séduit par qn.; նախատինքն իսկզբնատիպն ձգին, l'injure retombe sur l'original.

Ձգեռտ s. rot.

Ձգիչ a. attractif; entraînant; — զօրութիւն, force attractive, attraction.

Ձգձգեմ, եցի va. tirailler, traîner.

Ձգողական V. Ձգիչ.

Ձգողութիւն s. attraction; — մասանց, — moléculaire.

Ձգումն s. tir, tirage; attraction; tendance; attachement; — բմպելեաց, trait; — շնչոյ, respiration.

Ձգռտամ, ացի vn. roter, faire des rots.

Ձգտեմ, եցի. Ձգտեցուցանեմ, ուցի va. tendre, étendre, allonger, étirer; bander.

Ձգտիմ, տեցայ vn. s'étendre, s'allonger, s'étirer, prêter, se prolonger; tendre, aboutir; s'efforcer, tâcher de; s'étirer, s'allonger, étendre les bras; — աչօք զիեւո ուրուք, suivre qn. des yeux.

Ձգտումն s. tension, tendance, extension, allongement, distension; tension, contention; effort; — յղաց, convulsion.

Ձեզէն, Ձեզոյն adv. de vous-même, par vous-même; personnellement.

Ձեղուն, ուանց s. plafond; — բերանոյ, palais; — գլխոյ, crâne.

Ձեռագէտ s. artiste, artisan; ouvrage d'artiste.

Ձեռագիտութիւն s. l'industrie manuelle, art.

Ձեռագիր, գրաց s. manuscrit; obligation par écrit, billet; signature.

Ձեռագործ, ից a. fait à la main, fait par la main des nommes, manuel; manufacturier, industriel; s. manufacture, ouvrage de main.

Ձեռագործական a. de main, artificiel, industriel.

Ձեռագործեմ, եցի va. faire ou fabriquer avec les mains, manufacturer, travailler.

Ձեռագործի, ծոյ, ծեաւ s. outil, instrument.

Ձեռագործութիւն s. manufacture, ouvrage de main, industrie.

Ձեռագրեմ, եցի va. écrire de sa main; signer.

Ձեռագրութիւն V. Ձեռագիր.

Ձեռակալ V. Ձերբակալ.

Ձեռական a. de main, manuel; qui est sous la main, soumis; propre.

Ձեռասլ, աց, ոլ s. menottes, manicles; դնել ձեռակապս, mettre des menottes, emmenotter.

Ձեռակերտ, աց a. fait à la main, manuel; manufacture, ouvrage de main; bâtiment, ville bâtie par soi; ferme; artiste; métier; — իւր, ouvrage de ses mains, son œuvre.

Ձեռակերտեմ V. Ձեռագործեմ.

Ձեռակերտիկ V. Ձեռակերտ.

Ձեռակոծ առնեմ va. frapper avec la main, donner des coups de poing.

Ձեռահիւս a. tissé par la main.

Ձեռահմուտ a. qui a une main exercée, habile, adroit.

Ձեռածիր s. pourboire, pot-de-vin.

Ձեռամբացի adv. de la main, avec la main.

Ձեռասուն V. Ձեռնասուն.

Ձեռաստեղծ a. créé par la main.

Ձեռասրբիչ s. essuie-main, serviette.

Ձեռատունկ a. planté de sa propre main; s. arbre planté

de sa propre main ; fig. créature ; —ք ձեր լիցին, ils seront l'ouvrage de vos mains.

Ձեռբակալ V. Ձերբակալ.

Ձեռէք s. gant ; հանել զձեռս, déganter ; se déganter, ôter ses gants ; ագանել ձեռս, ganter, se ganter, mettre ses gants ; ագուցանել ձեռս, ganter qn., lui mettre ses gants.

Ձեռն, ռին, ռամբ ou ձերբ, ձեռք, ռաց sm. main ; bras ; fig. main, force, pouvoir ; main, aide, secours ; — արկանել, mettre la main sur, saisir, s'emparer de ; — արկանել, — իգործ արկանել ou առնել, mettre la main à, entreprendre, se mettre à, mettre la main à l'œuvre, commencer l'affaire, se mettre en train de, intenter ; — տալ, donner la main, secourir, donner les moyens, prêter la main, donner ou prêter secours, donner un coup de main ; — տալ իրերաց, s'aider, se secourir les uns les autres ; — տալ անմեղութեան, soutenir l'innocence ; — տալ ի, consentir à ; — տալ հաւանութեան, donner son assentiment, consentir ; — հաւանութեան, consentement ; ի— տալ, livrer entre les mains ; ձեռս բառնալ, lever les mains ; ձեռս ամբառնալ, lever les mains, le bras contre qn., étendre la main sur qn. ; ամբարձ զձեռն իւր տիրապետել, il forma le projet de s'emparer de l'autorité ; ձեռս դնել, imposer les mains, ordonner ; signer, mettre sa signature ; — անձին ի արկանել, se vanter, se piquer de, être fier de, se prévaloir de, se faire honneur de, se glorifier de ce que ; իձեռն, ընդ ձեռն, par, par l'entremise, par le moyen, au moyen, moyennant, par le canal ; ի— նորա, par lui, par son canal ; ձեռամբ, par la main, de la main ; ձեռամբ իմով փորեցի, je perçai de ma propre main ; ձեռաց իւրեանց հայթայթէին զպէտսն, ils vivaient de leur travail ; զձեռամբ, իձեռանէ, sous la main ; իձեռանէ, adjoint ; ի ձեռանէ նորա վարէ իշխանութիւն, il gouverne sous lui ; պաշտօնեայ իձեռանէ, fonctionnaire subalterne ; առ —, sous la main, proche : առ ձեռն բառարան, dictionnaire portatif, de poche ; ձեռն ի—, de main en main, de la main à la main ; ընդ ձեռամբ լինել, être sous la main, sous le pouvoir de qn. ; ունել ընդ ձեռամբ, avoir sous la main ; որ ընդ ձեռամբ է, subordonné ; ընդ ձեռամբ առնել՝ նուաճել, réduire sous sa puissance, subjuguer ; արկանել ընդ ձեռամբ, soumettre ; կալ ընդ ձեռամբ ուրուք, se soumettre à qn., dépendre de lui ; յերկոցունց ձեռաց աջողակ, ambidextre, qui se sert également bien des deux mains ; ձեռս իկապ, les mains liées, les bras croisés ; ձեռս յետս կապեալ, les mains

liées derrière le dos; ի ձեռս անկանել, * ձեռք իյնալ, tomber entre les mains, se faire prendre, se faire pincer ou empoigner; ի ձեռս բերել, * ձեռք ձգել, obtenir, procurer, attraper, accrocher; ձգել զ—, V. Ձգեմ; կարկառել զ—, V. Կարկառեմ; ելանել ըստ —, V. Ելանեմ; Թողուլ ի ձեռս, laisser entre les mains; արկանել զոք ի ձեռս ուրուք, livrer aux mains de qn.; անկանել ի ձեռս ուրուք, tomber dans les mains de qn.; — օգնականութեան գտանել, trouver aide, du secours, être favorisé par; զձեռանէ ունել, tenir par la main; ի— առնուլ, saisir, empoigner, s'emparer; տարածել զձեռս իւր առ ոք, tendre ses bras à qn.; Ճողոպրիլ ի՛ներքուստ ձեռին ուրուք, se sauver des mains de qn.; — մխել, se mêler; mettre la main à, entreprendre, tenter; — մխել յոք, toucher à qn., mettre la main sur lui, lever la main contre lui; ի ձեռս քո է, il est entre vos mains, il ne tient qu'à vous; համբուրել զձեռս ou * ձեռք պագնել, V. Համբուրեմ; չէր — նորա բաւական, il ne pouvait pas, il n'avait pas les moyens; ըստ ձեռին բաւականի, selon son pouvoir, ses moyens; եղեւ — Տեառն ի վերայ իմ, la main du Seigneur fut sur moi; ահա — իմ ընդ քեզ, ma main sera avec vous; —ք փապարեալք յաշխատութիւն, mains endurcies au travail; մահահամբոյր ձեռամբ, d'une main fatale; հզօր ձեռամբ, d'une main ou avec une main forte; յամենայն տեղիս ուր միանգամայն հասանէր — իւր, partout où il pouvait; — օտար, une main étrangère; V. Ձեռք.

Ձեռնագէտ s. artiste; chiromancien.

Ձեռնագիծ, գծի s. paraphe.

Ձեռնագիտականն s. chiromancie.

Ձեռնագիր, գրաց s. signature; — արկանել, mettre sa —, signer.

Ձեռնագրեմ V. Ձեռագրեմ.

Ձեռնադրելի s. ordinand.

Ձեռնադրեմ, եցի va. mettre, imposer les mains, ordonner, donner ou conférer les ordres à qn., consacrer, sacrer.

Ձեռնադրիչ, Ձեռնադրող s. ordinant.

Ձեռնադրութիւն s. imposition des mains, ordination, ordre; — եպիսկոպոսի, sacre.

Ձեռնազնին a. que l'on peut toucher avec la main, palpable.

Ձեռնածու, աց s. jongleur, escamoteur, prestidigitateur, bateleur, faiseur de prestiges, joueur de gobelets.

Ձեռնածութիւն s. jonglerie, escamotage, batelage, prestige, tour, tour de passe-passe.

Ձեռնակապ V. Ձեռակապ.

Ձեռնակնոց V. Ձեռնաչոց.

Ձեռնահմայ, ից s. chiromancien.

Ձեռնահմայութիւն s. chiromancie.

Ձեռնածգութիւն V. Ձեռնածգութիւն.

Ձեռնածիգ լինիմ vn. porter la main; attenter, empiéter.

Ձեռնաղաց, ից s. moulin à bras.

Ձեռնամած a. les mains jointes.

Ձեռնամերձ լինիմ vn. toucher, mettre la main sur.

Ձեռնամուխ լինիմ vn. mettre la main à, entreprendre, attenter, empiéter; — լինել իգործ ինչ, entreprendre une affaire, s'engager dans une affaire.

Ձեռնաչոց, ի s. lorgnon, lorgnette, face à main.

Ձեռնապետ, աց s. chef des maîtres artistes.

Ձեռնասուն a. nourri, élevé dans ses mains; s. nourrisson, pupille, élève; créature; առնել իւր —ս, se faire des créatures.

Ձեռնատ, ի a. manchot.

Ձեռնարկ, ի s. entreprise; argumentation.

Ձեռնարկեմ, եցի vn. mettre la main à, entreprendre, tenter; mettre la main sur, attaquer, attenter, empiéter; argumenter, disserter, raisonner.

Ձեռնարկու, աց s. argumentant; entrepreneur.

Ձեռնարկութիւն s. entreprise; attaque, empiétement; argument, raisonnement.

Ձեռնարկումն s. argumentation.

Ձեռնարձակութիւն s. agression, usurpation, empiétement.

Ձեռնարուեստ, ից s. artisan, artiste; art; ouvrage.

Ձեռնբեկ a. qui a la main, le bras cassé, manchot.

Ձեռնդրութիւն V. Ձեռնադրութիւն.

Ձեռներէց a. entreprenant, hardi, décidé, brave, courageux; — լինել, entreprendre, oser, avoir le courage, la hardiesse de, empiéter; s'émanciper; — առնել, donner de la hardiesse, émanciper.

Ձեռներիցութիւն sm. présomption, hardiesse, action hardie, trait de courage.

Ձեռնրդել, Ձեռնրնտել a. apprivoisé, familier, domestique.

Ձեռնթափ լինիմ vn. retirer ses mains, abandonner; — յամենայնէ, tout abandonner, jeter le manche après la cognée.

Ձեռնկալեմ, եցի vn. donner, prêter la main, aider, secourir.

Ձեռնկալու, աց a. qui prête la main, qui aide; — լինել V. Ձեռնկալեմ.

Ձեռնկալութիւն s. aide, secours, assistance.

Ձեռնհաս a. capable; — առնիմ՝ լինիմ՝ գտանիմ, être capable, pouvoir, être en état ou à même de, venir à bout de tout.

Ձեռնհասութիւն s. capacité, habileté.

Ձեռնձգութիւն s. action de tendre la main; empiétement, usurpation.

**Ձեռնոց** V. **Ձեռէք.**

**Ձեռնոցագործ**, ագ s. gantier, celui qui fait des gants.

**Ձեռնոցավաճառ**, ագ s. gantier, celui qui vend des gants.

**Ձեռնունայն** adv. à vide, les mains vides.

**Ձեռնպահ լինիմ** vn. se garder, ne pas toucher.

**Ձեռնտու** a. qui donne du secours, qui aide; contribuant, favorable; — լինել, donner, prêter la main à, prêter secours, secourir, aider, contribuer, seconder, favoriser.

**Ձեռնտուութիւն** s. secours, aide, assistance, concours.

**Ձեռնօդիկ** s. manchon.

**Ձեռք** V. **Ձեռն**; *—ի տակէն, sous main; *—ի տակէն բանիի՝ գործել, agir sous main; *— էն եկածն ընել, faire tout ce qui dépend de soi, faire son possible; *— տալ, donner la main; donner la main, prêter secours, soutenir; suffire; ինձ — չտար, mes moyens ne me permettent pas; ինձ — կուտայ, il me suffit, cela m'arrange, me convient; *—ը ծօծվել՝ սեղմել, donner une poignée de main, serrer la main à qn.; *վերչին —ը տալ, mettre la dernière main; *— երկնցուել, tendre la main; tendre la main, demander l'aumône; *— վերցուել, lever la main; *— զարնել, battre des mains; mettre la main à, entreprendre; *—էն գալ՝ չգալ, être ou ne pas être capable; *—էն բան չգար, il n'est capable de rien, il n'est bon à rien; *ամէն բան —էն կուգայ, il est bon à tout, il est très-adroit; *յաջող — ունենալ, avoir la main heureuse; *—ը կապած լինել, avoir les mains liées; *բանէ մը —ը լուալ, se laver les mains d'une chose; *լաւ՝ ապահով— լինել, être en bonnes mains; *առաջին —է, de première main; *լեցուն ձեռքով տալ, donner à pleines mains; *վարպետի —է եկած բան, chose faite de main de maître; *—ը զէնք, à main armée; *— ձեռքի տալ, se donner la main, se tenir par la main; *բանէ մը —ը քաշել, retirer ses mains, abandonner, se retirer; մի — թուղթ, une main de papier.

**Ձետ, ոյ, ով** s. queue.

**Ձեր, ոց, ըմէ** a. poss. votre; մայր —, votre mère; յեղբարց ձերոց, de vos frères, par vos frères.

**Ձերային, յնոց** pron. vôtre.

**Ձարբազատ** adj. émancipé, majeur; — առնել, émanciper.

**Ձերբազատիմ, եցայ** vn. s'émanciper, être majeur, voler de ses propres ailes.

**Ձերբազատութիւն** s. émancipation, majorité.

**Ձերբակալ** a. arrêté, pris, prisonnier; — առնել, arrêter, capturer, faire prisonnier.

**Ձերբակալեմ** V. **Ձեռբակալ առնեմ.**

**Ձերբասուն** V. **Ձեռնասուն.**

Ձերբացի V. Ձեռամբացի.

Ձերոյին V. Ձերային.

Ձեւ, ոյ, ով s. forme ; figure ; formule ; habillement, costume; attitude, maintien, tenue, contenance, manière ; géom. figure ; զայս — օրինակի, de cette manière, de cette façon, ainsi ; — տալ, donner une forme ; * ձեւի բերել, donner une jolie forme ; պարզ ou անպաճոյճ՝ ազնուական ունել —ս, avoir des manières simples, nobles, distinguées ; — բանից, langage ; գրել — բանից օրինակ զայս, il écrit une lettre ainsi conçue.

Ձեւական a. pour la forme.

Ձեւակերպեմ, եցի va. figurer, former.

Ձեւակերպութիւն s. configuration.

Ձեւակերտական adj. plastique.

Ձեւակերտութիւն sm. plastique, l'art plastique.

Ձեւանամ V. Կերպարանիմ; * ֆիւանդ —, faire le malade, faire semblant d'être malade ; խենդ —, faire ou contrefaire le fou.

* Ձեւացնեմ V. Ձեւացուցանեմ; խաղ —, représenter une pièce.

Ձեւացումն V. Կերպարանութիւն; * բոլոր ասոնք ձեւացմունք են, tout cela, ce sont des farces.

Ձեւացուցանեմ V. Կերպարանեմ.

Ձեւեմ, եցի va. former, figurer, façonner ; traverser ; couper, tailler.

Ձեւիչ s. ciseaux.

Ձեւոց, ից s. équerre.

Ձեւոցանամ V. Ձեւանամ.

Ձէթ, ձիթոյ, ով s. huile d'olive ; huile ; olive.

Ձի, ոց s. cheval ; հեծանել ձիի, monter à — ; երթալ ձիի, aller à — ; իջանել ձիոյ, descendre de — ; զձնալ զբօսնուլ ձիով, faire une partie de —, se promener à — ; զբօսանք ձիոյ, promenade à — ; կատաղել ձիոյ, s'emporter, prendre le mors aux dents ; խնջէ՝ վրնջէ ձին, le — hennit ; ընթացք ձիոյ, les allures du — ; սանձել զձին, dompter, réduire le — ; * ձին չորս ոտք՝ սանձարձակ վազցունել, mettre le — au galop, aller ou courir à toute bride ; դարմանել զձի, panser, étriller un — ; պայտել զձի, ferrer un — ; * ձիու վերայ կենալ, se tenir sur le — ; * ձին տակը գլորեցաւ, son — s'abattit sous lui ; սեւ՝ ճերմակ՝ գորշ՝ պիսակ՝ ճանճկէն ou ճանճաճերմակ՝ ճարտուկ՝ աշէտ՝ ճարտուկ ճանճկէն —, cheval noir, blanc, gris, pommelé, moucheté, pie, alezan, rubican ou rouan ; մատակախազ՝ մալեակ ձի, — entier, hongre ; * հեծնելու՝ կառքի ձի, — de selle, de voiture ; * կառքի եւ հեծնելու ձի, — à deux fins ; ախտաւոր՝ աֆիպալրանոց՝ խստերախ՝ խրոխտ՝ եռանդուն՝ աներկիւղ՝ ուժեղ՝ ֆլու՝ հնազանդ՝ անֆլու՝

կատաղի ou խենդ՝ կիցընկէց՝ խրչան ձի, — vicieux, impétueux ou superbe, fougueux, fier, ardent ou fringant, hardi ou courageux, vigoureux, docile, obéissant ou soumis, indocile, fou, rétif ou qui rue, ombrageux ; անպիտան ձի, rosse ; մատակ ձի, jument ; V. Լծեմ, Գեղազատ, Նժոյգ.

Ձիաբոյժ, ուժի sm. vétérinaire.

Ձիաբոյծ, ուծից s. éleveur de chevaux.

Ձիաբուժութիւն s. hippiatrique, art vétérinaire.

Ձիագետի, տւոյ s. hippopotame.

Ձիագլուխ a. qui a une tête de cheval.

Ձիազէն V. Ասպազէն.

Ձիաճափ V. Ձիարշաւ.

Ձիալախուր s. sison.

Ձիախաղաց adv. à cheval.

Ձիական a. de cheval ; s. cavalier, chevalier ; ornith. chevalier.

Ձիակերպ a. en forme de cheval.

Ձիակորեակ, եկի s. bot. panic.

Ձիահալած առնեմ va. poursuivre, chasser à cheval.

Ձիամարտ, ից s. combat à cheval, combat de cavalerie.

Ձիամարտիկ a. s. qui combat à cheval.

Ձիամարտութիւն V. Ձիամարտ.

Ձիան s. pl. les chevaux.

Ձիանդամ s. dont le membre viril ressemble à celui d'un cheval.

Ձիասէր a. qui aime les chevaux.

Ձիաստան, ի s. écurie ; V. Ձիաստանի.

Ձիաստանի, նւոյ. Ձիաստաց, ի s. frelon.

Ձիավաճառ, աց s. marchand de chevaux, maquignon.

Ձիավար, աց s. postillon ; écuyer : — արշաւեմ V. Ձիավարեմ.

Ձիավարականն s. l'art de l'équitation.

Ձիավարեմ, եցի vn. mener, conduire ou guider un cheval ; արշաւասոյր —, aller au galop, brûler le pavé.

Ձիավարիկ s. jockey.

Ձիավարժ, ից s. écuyer ; cavalier.

Ձիավարժոց, աց s. manége.

Ձիավարութիւն sm. équitation.

Ձիավարուն adj. praticable pour les chevaux, où l'on peut aller à cheval.

Ձիատած V. Ձիաբոյծ.

Ձիարկեմ, եցի vn. monter à cheval.

Ձիարձակ լինիմ՝ արշաւեմ vn. lâcher la bride à un cheval, aller au grand galop, courir à toute bride, à bride abattue.

Ձիարձակարան, աց s. hippodrome.

Ձիարշաւ V. Ձիրնթացք ; — առնել՝ խաղալ V. Ձիարձակ.

Ձիարշաւանք, նաց s. hippodrome ; course à cheval.

Ձիացուլ, ցլուց s. hippocentaure, centaure.

Ձիաւոր V. Ձեծեալ.

Ձիաւորիմ V. Ձիարկեմ.

Ձիաւորութիւն s. équitation.

Ձիգ s. tir, action de tirer; a. tendu, étendu; long, prolixe; adv. longtemps; ժամս ձիգս, des heures entières, de longues heures; — դնել, tirer de l'arc; ի— արկանել, prolonger, traîner en longueur.

Ձիրնթաց, ից a. qui va à cheval; —ք s. course de chevaux; hippodrome.

Ձիրնթացարան, աց s. hippodrome.

Ձիրնթացիկ adj. qui va à cheval; —ք s. V. Ձիրնթացք.

Ձիթագոյն a. olivâtre.

Ձիթագործութիւն s. fabrication de l'huile d'olive.

Ձիթալից a. plein d'huile d'olive.

Ձիթակութ, ծոց s. olivaison, récolte des olives.

Ձիթահան adj. qui fait de l'huile d'olive; —ք s. pressoir à l'huile; huilerie.

Ձիթաման s. huilier.

Ձիթապտուղ, տղոյ s. olive.

Ձիթաստան, ի. Ձիթաստանեայք, բայց s. plant ou jardin d'oliviers.

Ձիթավաճառ, աց s. marchand d'huile.

Ձիթեմ, եցի va. arroser d'huile d'olive, huiler.

Ձիթենի, ենւոյ, ենեաց s. olivier; —վայրենի, olivier sauvage.

Ձիուն, ոտանք a. qui a le pied d'un cheval.

Ձիութիւն sm. nature de cheval.

Ձիր, ձրից s. don, grâce, faveur; don, talent, faculté; — պերճախօսութեան, le don de l'éloquence.

Ձիւն, ոյ, ով s. poix.

Ձիւնեմ, եցի va. poisser.

Ձիւնալից, Ձիւնաւոր adj. poisseux.

Ձիւն, ձեան s. neige; — գայ իջանէ, il tombe de la neige, il neige; ձիւնն դիզանի, la — s'amoncelle; հալեալ —, de la — fondue; *ձիւնով ձեծկուիլ, se battre à coups de boules de —; *ձիւներումէջ կորսուիլ, se perdre dans les neiges; մանր խոշոր —, neige menue, gros flocons.

Ձիւնաբեր a. qui amène de la neige; s. neige, flocons de neige; fig. tentation, peine, maux.

Ձիւնագոյն a. de couleur de neige, blanc comme la neige, blanc comme de la neige.

Ձիւնաճաղ a. enfoncé, enseveli dans la neige.

Ձիւնաճոյղ V. Ձիւնագոյն.

Ձիւնալիր, Ձիւնալից a. plein de neige, neigeux.

Ձիւնախաղաղ a. couvert de neige, neigeux.

Ձիւնախառն a. mêlé de neige.

Ձիւնածաղիկ, ղկան s. boule de neige.

Ձիւնածնիմ լինիմ vn. être

battu par la neige; se battre à coups de boules de neige.

Ձիւնակիր a. qui porte de la neige.

Ձիւնաձոր s. puits de neige, glacière.

Ձիւնանալ, ացի vn. neiger; devenir blanc comme de la neige, être couvert de neige.

Ձիւնանման a. semblable à la neige.

Ձիւնապատ a. couvert, entouré de neige.

Ձիւնաջուր s. eau de neige.

Ձիւնասոյզ V. Ձիւնաճաղ.

Ձիւնացուցանել, ուցի va. faire tomber comme de la neige; faire neiger.

Ձիւնափայլ a. brillant ou blanc comme de la neige, blanc comme neige, plus blanc que la neige, dont la blancheur efface celle de la neige.

Ձիւնել vn. neiger, tomber de la neige; ձիւնէ, il neige; ձիւնեաց, il a neigé.

Ձիւնեղէն a. de neige.

Ձլեմ, եցի va. défricher, fendre.

Ձկան մաշարար V. Խոշնդատ.

Ձկնաբան, ից s. ichthyologiste.

Ձկնաբանական a. ichthyologique.

Ձկնաբանութիւն s. ichthyologie.

Ձկնաբուծութիւն s. pisciculture.

Ձկնախօս, etc. V. Ձկնաբան, ect.

Ձկնականջ, ացի sm. moule (mollusque).

Ձկնակեր, ացի a. qui mange du poisson, ichthyophage.

Ձկնակերպ a. semblable à un poisson, qui a la forme d'un poisson.

Ձկնաձան V. Ձկնորս.

Ձկնածու s. boutargue.

Ձկնամորթ, ոյ s. peau de poisson.

Ձկնավաճառ, ացի s. marchand de poisson, poissonnier.

Ձկնատեղանք, ենից. Ձկնատեսանք, նաց s. vivier, étang, piscine.

Ձկնարան, ացի s. poissonnerie, marché au poisson.

Ձկնաւէտ a. poissonneux.

Ձկնաքաղ, ացի s. albatros.

Ձկնիկ sm. petit poisson, fretin.

Ձկնկիթ s. caviar.

Ձկնկուլ s. courlis, corbigeau.

Ձկնորս, ացի s. pêcheur.

Ձկնորսաբար adv. à la manière des pêcheurs.

Ձկնորսական a. de pêcheur; qui concerne la pêche.

Ձկնորսութիւն sm. pêche; métier du pêcheur.

Ձկնուղեղ s. blanc de baleine.

Ձկտեմ, etc. V. Ձգտեմ, etc.

Ձմեռային V. Ձմերային.

Ձմեռանոց V. Ձմերոց.

Ձմեռն, մերան, ըունք, բանց s. hiver; fig. mauvais temps, orage, tempête; խաստ՝ դժբուդակ՝ խոնաւ՝ անձրեւային՝ ցուրտ՝ մեղմ՝ չոր —, hiver bien rude ou rigoureux, fâ-

cheux, humide, pluvieux, froid, bien doux, sec; խոր ձմեռան, dans le plus fort de l'—, dans le fort de l'—, dans les rigueurs de l'—; խմէջ ձմեռան, au milieu de l'—; ի ձմեռան, en —; անցուցանել զ— իքաղաքի՝ իգեղջ, passer l'— à la ville, à la campagne; հանդերձ ձմեռան, habit, vêtement d'—; պաշար ձմեռան, des provisions pour l'—; անցեալ —, l'— dernier; այս —, cet hiver; պտուղք ձմեռան, fruits d'hiver.

Ձմեռնաբեր a. qui ramène l'hiver.

Ձմեռնակ s. engelure; * — ունենալ, avoir des engelures.

Ձմեռնամուտ, մտից s. entrée de l'hiver, commencement de l'hiver.

Ձմեռնային V. Ձմերային.

Ձմեռնանամ, ացայ vn. faire froid comme en hiver; être en butte aux rigueurs de l'hiver, être exposé au froid de l'hiver; fig. éprouver des tempêtes, être surpris par l'orage.

Ձմեռնասուն a. nourri dans ou pendant l'hiver.

Ձմեռնատունկ, տնկոց sm. plante d'hiver.

Ձմերական. Ձմերային adj. d'hiver, hivernal.

Ձմերայնի, նոյ. Ձմերանի, նւոյ s. hiver, la saison d'hiver; fig. tempête, orage; adv. dans l'hiver, pendant l'hiver.

Ձմերանոց, աց s. caserne.

Ձմերատուն sm. maison d'hiver.

Ձմերեմ, եցի vn. hiverner, passer l'hiver; être en quartier d'hiver.

Ձմերնական, Ձմերնային V. Ձմերական.

Ձմերոց, աց s. lieu propre à passer l'hiver; caserne, quartier d'hiver.

Ձմերուկ, ըկի s. pastèque, melon d'eau.

Ձող, ոյ, ով s. barre, perche, gaule, échalas.

Ձողաբարձ a. échalassé; s. treille, berceau, palissade; — յօրինել՝ զարդարել, échalasser, palissader.

Ձողակ, ի s. petite barre; — հրացանի, baguette de fusil.

Ձողիք s. palissade, rangée d'échalas.

Ձոյլ, ձուլոյ a. fondu, de fonte; massif; s. fonte; masse, lingot; poids, pesanteur.

Ձոր, ոց s. vallée.

Ձորալիր a. qui remplit une vallée.

Ձորակ, աց s. vallon.

Ձորաձեւ a. qui a la forme d'une vallée.

Ձորամուտ լինիմ vn. entrer, s'introduire dans la vallée.

Ձոր, ոյ, ով s. habit, vêtement.

Ձորձարեր a. qui produit de la matière à faire des vêtements.

Ձորձիկ s. petit habit, méchant habit.

Ձորձիմ, եցայ vn. devenir un habit.

Ձորձմոյկ s. habit et chaussure.

Ձու, ոց s. œuf; — ածել՝ արկանել, pondre, pondre des œufs; ձուի միջուկ, le jaune d'œuf; սպիտակուց ձուոյ, le blanc d'œuf; Թերխաշով՝ պինդ —, œuf à la coque, dur; իձուս նստել, couver.

*Ձուազեղ, Ձուածեղ V. Ձուարդ.

Ձուալից a. œuvé.

Ձուածին a. ovipare.

Ձուածու, աց s. pondeuse.

Ձուածութիւն s. ponte.

Ձուակերպ adj. ovalaire, ovoïde.

Ձուաձեւ a. ovale.

Ձուավաճառ, աց s. marchand d'œufs.

Ձուարան, ի s. ovaire.

Ձուարդ s. omelette.

Ձուլած, ոյ s. fonte.

Ձուլածոյ, ից a. fondu, de fonte; s. fonte, ouvrage en métal fondu.

Ձուլական a. fusible.

Ձուլականութիւն sm. fusibilité.

Ձուլարան, աց s. fonderie; lingotière.

Ձուլեմ, եցի va. fondre, mettre en fusion; exécuter en fonte; geler, rendre solide, endurcir.

Ձուլելի a. fusible.

Ձուլիչ, Ձուլող s. fondeur.

Ձուլումն s. fonte.

Ձուկն, ձկանց s. poisson; astr. poisson; — որսալ, pêcher, aller à la pêche; — խորովել՝ տապկել, griller, frire du —; ձկան ou ձկի ականջ, V. Ձկնականջ.

Ձունձ, ձնձոյ V. Գրգլեակ.

Ձրավաստակ a. qui travaille gratis.

Ձրի, րոյ s. gratuité; a. gratuit; adv. gratuitement, gratis.

Ձրիաբար V. Ձրի adv.

Ձրիավարժ, ից s. boursier, dont l'instruction se fait gratis.

Ձրիատուր a. donné gratuitement, gratuit.

Ձրիութիւն s. gratuité.

Ձրձեմ, եցի va. déchirer, dévorer.

Ձրձիտ a. celui qui déchire, rapace.

Ձօն V. Ձօնի.

Ձօնարան, աց s. lieu d'offrande, autel.

Ձօնեմ, եցի va. offrir, présenter, dédier, consacrer.

Ձօնի, նեաց s. don, présent, offrande; ձօնիս առնել, offrir.



Ղ (ghad) s. dix-huitième lettre de l'alphabet et treizième des consonnes; quatre-vingt-dix, quatre-vingt-dixième.

Ղակիշ, կշի s. retranchement, camp; — ածել, faire des retranchements, retrancher, dresser un camp.

Ղամբար, աց sm. lampe, flambeau.

Ղամբարանշոյլ, Ղամբարափայլ a. flambant, brillant, éclatant.

Ղամբարեմ, բեցի va. éclairer par des flambeaux.

Ղամղայեալ a. brodé, galonné.

Ղանդանոն s. laudanum.

Ղաշիկ V. Ղակիշ.

Ղարիկոն, աց s. agaric.

Ղեակ, Ղեկ, եկաց s. gouvernail, timon; rame, aviron.

Ղեկավար, աց s. timonier; fig. directeur, chef.

Ղեկավարեմ, եցի va. gouverner, manœuvrer, diriger un vaisseau; fig gouverner, diriger.

Ղեկավարութիւն s. l'action de manœuvrer un vaisseau; direction, gouvernement.

Ղեղի V. Ղեղի.

Ղենջակ, աց s. linge, serviette; touaille, essuie-main.

Ղեր s. bot. souchet.

Ղերձ, ից s. colis.

Ղեւտական adj. lévitique; sm. Lévitique (troisième livre du Pentateuque).

Ղեւտացի s. lévite.

Ղեւտիկոն V. Ղեւտական s.

Ղողակ V. Լողակ.

Ղոյղ V. Լոյղ.

Ղորկ, etc. V. Ողորկ, etc.

Ղուղակ V. Լողակ.

Ղուղակեմ, եցի va. cacher; vn. se cacher.

Ղուղան, ի sm. cylindre; rouleau.

Ղուղիմ, ղեցայ vn. nager; se cacher.

Ղուբան V. Կուբան.

*Ղրկեմ, եցի va. envoyer, expédier.

*Ղրկուիմ, եցայ vn. être envoyé, expédié.

Ղօղակ, աց s. celui qui nage; celui qui se cache.

Ղօղանջանք V. Ղօղանջիւն.

Ղօղանջեմ, եցի vn. sonner, résonner, tinter; aboyer, japper, hurler; fig. aboyer.

Ղօղանջիւն, Ղօղանջումն s. bruit, son, tintement; aboiement, hurlement.

Ղօղեմ, եցի va. cacher; vn. se cacher.

Ղօղեցուցանեմ, ուցի va. cacher.

Ղօղիմ, ղեցայ vn. se cacher, se nicher, se tapir, se clapir; nager.

Ղօղկիմ, եցայ vn. se cacher.



Ճ (djé) sm. dix-neuvième lettre de l'alphabet et quatorzième des consonnes; cent, centième.

**Ճագար**, ացս. lapin; մատակ —, lapine, hase; ձագ —ի, lapereau; որջ —ի, clapier; կաղկանձել —ի, clapir.

* **Ճաճխիմ** V. **Ճայճեմ**.

* **Ճաճեցնեմ** V. **Ճայճեցուցանեմ**.

* **Ճաճռտիմ** vn. se gercer, se fendiller, se fêler; craquer.

**Ճախանոց**, ացս. travail (machine de bois pour ferrer les chevaux vicieux).

**Ճախարակ**, ացս. tour (machine pour façonner le bois, etc.); poulie, bobine.

**Ճախարակագործ** a. tourné, façonné au tour.

**Ճախարականեւ** a. circulaire, rond.

**Ճախարակաւոր** V. **Ճախարակագործ**.

**Ճախարակեայ** adj. tourné, façonné au tour; fig. bien tourné, contourné, recherché, embelli.

**Ճախարակեմ**, եցի va. tourner, façonner au tour; fig. bien tourner, arrondir, façonner, orner, parer, embellir.

**Ճախիճ** V. **Ճաիճ**.

**Ճախճախուտ** a. marécageux.

**Ճախր** s. vol, essor, volée; cabriole, culbute; — ձիոյ, caracole; — առնուլ, prendre

son vol, son essor, son élan, voler, s'envoler; faire des cabrioles, cabrioler, culbuter, se glisser; — առնուլ ձիոյ, faire une caracole, caracoler.

**Ճախրանք** V. Ճախր.

**Ճախրեմ, Ճախրիմ** V. Ճախր առնում; բարձրագլուխ —, porter la tête haute, être victorieux, l'emporter sur.

**Ճակաճան, աց** a. paillard, luxurieux, débauché, libertin.

**Ճակաճանութիւն** s. paillardise, débauche, libertinage.

**Ճակատ, ուց** sm. front; — զօրու՝ բանակի, disposition d'une armée en ordre de bataille, ordre de bataille, bataille rangée, armée rangée en bataille; — գրոց, frontispice; — շինուածոց, façade, frontispice; եռանկիւնի —, fronton; — տալ՝ յարդարել, se ranger en ordre de bataille, présenter la bataille, attaquer, en venir aux mains avec les ennemis; ելանել ի—, s'engager dans un combat, attaquer; յառաջնում անդ Ճակատու, dans une première rencontre, combat; ի — հան ընդդէմ նոցա, il leur opposa...; անկանել ի Ճակատու, demeurer sur la place; զ— ի արկանել, se frapper le front; — առ —, face à face, vis-à-vis; — Ճաղատ խորշոմեալ՝ սպառնալից, front chauve, ridé, menaçant; — նորա նսեմանայ, son front se rembrunit; * Ճակին քրտինքովը դացը՝ ապրուստը Ճարել, gagner son pain, sa vie à la sueur de son front.

**Ճակատագիր, գրաց** s. destin, destinée, sort, fatalité; վեհ —, haute destinée.

**Ճակատագրական** a. fatal; s. fataliste.

**Ճակատագրեմ, եցի** va. prédestiner, destiner; յանմահութիւն Ճակատագրեալ, destiné à l'immortalité; Ճակատագրեալ է լինել սիրելի, sa destinée est d'être aimé.

**Ճակատագրութիւն** s. fatalisme.

**Ճակատամարտ, իւ** s. bataille rangée, bataille, combat, journée; օր —ի, jour du combat.

**Ճակատամարտիմ, տեցայ** vn. donner une bataille rangée, en venir aux mains avec les ennemis.

**Ճակատամուղ** a. qui défait l'armée ennemie, qui combat.

**Ճակատայարդար, աց** sm. agonothète, qui range une armée en bataille.

**Ճակատատեղ, Ճակատատեղի, ւոյ** s. le champ de bataille, camp.

**Ճակատեմ, եցի** . **Ճակատեցուցանեմ, ուցի** va. ranger ou mettre en bataille, disposer une armée en ordre de bataille, mettre son armée en rang.

**Ճակատիմ, տեցայ** vn. se ranger, se mettre en bataille, en rangs, en ordre de bataille, ranger son armée, en venir aux mains, aux prises.

Ճակնդեղ, ագ s. betterave.

Ճաի a. convenable, convenant, séant, propre; s. convenance; ի— adv. convenablement, à propos; ի— է, il convient, il est à propos; ի— լինել՝ գալ՝ պատահել, convenir à, être à propos, cadrer, s'adapter, s'appliquer, s'adresser, aller bien, s'ajuster parfaitement; չիցէ՞ ի—, ne convient-il pas? առաւել ի— գայ, il conviendrait mieux; ոչ ի— պատահէին ակնկալութեան նորա ելք գործոյն, les succès de l'affaire ne répondaient pas à son attente; ի— առնուլ, profiter de, tirer parti de; ի— Ճուէր նմա, ի— համարէր, il jugeait convenable, à propos; ոչ ի— Ճուեցաւ, il ne sembla pas juste, convenable de.

Ճաիաւոր V. Ճաի a.

Ճաիաւորեմ V. Ճաիեմ; — զգեստս, marier, assortir les couleurs.

Ճաիաւորութիւն s. convenance.

Ճաիեմ, եցի. Ճաիեցուցանեմ, ուցի va. rendre convenable, adapter, ajuster, rassortir.

Ճաիիճ, հճի sm. marais, marécage, bourbier.

Ճաիիմ V. իՃաի պատահել.

Ճաիողակի, Ճաիողապէս V. իՃաի adv.

Ճաիողութիւն s. convenance.

Ճաիուկ s. troupeau, troupe.

* Ճաղ V. Դագաղ.

Ճաղատ, etc. V. Կնտակ, etc.

Ճաոպատիմ V. Ճապատիմ.

Ճաճանչ, իցս, ագ s. éclat, rayon; — արբուսեան, ostensoire, soleil.

Ճաճանչագեղ, Ճաճանչազարդ a. radieux, rayonnant, éclatant, radiant, étincelant, brillant.

Ճաճանչաւէտ, Ճաճանչաւոր V. Ճաճանչագեղ.

Ճաճանչաւուխտ, Ճաճանչանաւուխտ adj. chatoyant, reluisant d'or et d'argent; s. broderie.

Ճաճանչեմ, եցի vn. luire, reluire, briller, étinceler, éclater.

Ճամարտակ, ագ s. charlatan.

Ճամարտակութիւն s. charlatanisme.

Ճամարտակեմ, եցի vn. faire du charlatanisme.

* Ճամբայ V. Ճանապարհ; — գալ, V. Զգաստանամ; —էն ելլել, se fourvoyer, dévier, s'égarer; — ելլել, se mettre en chemin, en route, s'acheminer; — բռնել, faire route, cheminer, voyager; —ն կտրել, couper le chemin; — բանալ, ouvrir le chemin, frayer la route; —ն գոցել, fermer le chemin; — բռնել, suivre un chemin, une route; se conduire; — դնել, mettre en route, expédier; V. Ճամբեմ.

Ճամբար, ագ s. camp, campement.

* Ճամբեմ, եցի va. renvoyer, remercier, congédier.

* Ճամբորդ V. Ճանապարհորդ.

*Ճամբորդութիւն V. Ճանապարհորդութիւն; — ընել, voyager.

Ճամկաւոր a. décoré, orné; brodé.

Ճամկաւորեմ, եցի va. décorer, orner; broder.

Ճամուկ, մկաց s. décoration, ornement; broderie.

Ճայ, ից s. geai; — ճղէ, le — cajole.

Ճայեակ, եկի s. choucas.

Ճայթեմ, եցի vn. éclater, petiller, craquer, faire explosion; crever; se fêler; se gercer; — յամբարտաւանութենէ՝ իկատաղութենէ, crever d'orgueil, de rage ou de dépit.

Ճայթեցուցանեմ, ուցի va. faire éclater, faire craquer; crever; fêler; gercer.

Ճայթիւն. Ճայթիք, թից. Ճայթումն s. éclat, cric-crac, crac, craquement, petillement, fracas, explosion.

Ճայիկ V. Ջամբիկ.

Ճայրոտեմ, եցի va. obscurcir, offusquer.

Ճայրոտութիւն s. obscurcissement de la vue.

Ճանաչական a. connu.

Ճանաչելի a. connaissable, reconnaissable.

Ճանաչեմ, ծանեայ, ծանիր, ծանուցեալ va. connaître, reconnaître, remettre, discerner, sentir; չ—, ne pas connaître, ne pas reconnaître, méconnaître; — զիրաւունս, entendre raison.

Ճանաչող s. connaisseur.

Ճանաչողութիւն s. connaissance; reconnaissance.

Ճանապարհ, աց s. route, chemin, voie; marché, débouché; voyage; voie, entremise, moyen; manière, méthode, procédé; — արքունի, grand chemin, chemin public; զճանապարհայն, dans le chemin, en chemin, chemin faisant; — առնել, faire chemin ou route, cheminer, voyager; frayer le chemin, la route; — արարեալ, chemin faisant; ի— անկանել, se mettre en route, en chemin, s'acheminer; փակել՝ խափանել զ—, encombrer le chemin; դնել ի—, mettre en route; ընդ ո՞ր —, par quel chemin? par quelle route? par où? ցուցանել զ—, montrer le chemin; տղմալից —, chemin boueux; աւուր միոյ —, durant une journée de chemin; — երկնից՝ առաքինութեան, le chemin du ciel, de la vertu; թիւրել զճանապարհս ուրուք, égarer les pas de qn.; գնալ զճանապարհս՝ զճանապարհ ուրուք, marcher dans les voies, sur les traces, sur les brisées de qn.; անգնաց՝ անկոխ —, chemin impraticable.

Ճանապարհագնաց sm. adj. voyageur.

Ճանապարհագնացութիւն s. voyage.

Ճանապարհակից s. compagnon de voyage.

Ճանապարհակիցք s. carrefour.

**Ճանապարհակցիմ**, կցեցայ vn. voyager, faire route ensemble, être compagnon de voyage.

**Ճանապարհակցութիւն** sm. voyage fait de compagnie.

**Ճանապարհացոյց**, ցուցի s. qui montre le chemin, guide, conducteur; — լինել, montrer, indiquer le chemin, guider, diriger.

**Ճանապարհորդ**, ից s. voyageur.

**Ճանապարհորդակից** s. compagnon de voyage.

**Ճանապարհորդարան**, աց s. itinéraire.

**Ճանապարհորդեմ**, եցի. Ճանապարհորդիմ, դեցայ vn. faire route, cheminer; voyager, faire un voyage.

**Ճանապարհորդութիւն** sm. voyage.

**Ճանբակ** sm. calamba, calambac.

**Ճանդան, Ճանդի** s. sandal.

**Ճանգ, Ճանկ**, աց s. griffe, ongle, patte; crochet, croc, crampon, grappin; * — ը մէկուն վերայ դնել, —ն անցունել, jeter, mettre le grappin sur qn.

* **Ճանկռտեմ**, եցի va. égratigner, écorcher.

**Ճանճ**, ից s. mouche.

**Ճանճաներմակ** a. tacheté de blanc et de noir, moucheté; — ձի, cheval moucheté.

**Ճանճիկ** s. moucheron, petite mouche.

**Ճանճիւն** s. les mouches.

**Ճանճկէն** V. Ճանճաներմակ.

* **Ճանճվան** V. Քշոց.

* **Ճանչնամ** V. Ճանաչեմ.

* **Ճանչցնեմ**, ցուցի va. faire connaître.

**Ճաշ**, ոյ s. dîner; dîner, repas, festin; — առնել, donner à dîner; — գործել, préparer le dîner; — անպաճոյճ, repas simple.

**Ճաշագործ**, աց s. celui qui donne un dîner.

**Ճաշաժամ**, ու s. l'heure de dîner, de repas.

**Ճաշակ**, աց s. goût, saveur; dégustation, gustation, essai; verre à boire, tasse, coupe; առնուլ զ—, goûter, déguster; ոչ եւս առնուլ զ— սիրոյ մտերմութեան, être dégoûté de l'amitié; դուզնաքեայ —, faible essai.

**Ճաշակական** a. gustatif.

**Ճաշակակից** V. Ճաշակից.

**Ճաշակաւորութիւն** s. dégustation; V. Ճաշակելիք.

**Ճաշակելի** a. qu'on peut goûter; celui qui goûte, mange.

**Ճաշակելիք**, լեաց s. goût, sens du goût.

**Ճաշակեմ**, եցի va. goûter, déguster; — զմահ, mourir; — զքաղցրութիւն խաղաղութեան, goûter les douceurs de la paix.

**Ճաշակեցուցանեմ**, ուցի va. faire goûter, faire manger.

**Ճաշակից** s. qui dîne ensemble, convive, commensal.

**Ճաշակումն** s. action de goûter, dégustation; action de manger.

Ճաշատեղ, աց. Ճաշատուն, տանց. Ճաշարան, աց s. salle à manger, réfectoire.

Ճաշեմ, եցի va. dîner; — արտաքս, — en ville.

Ճաշիկ s. petit dîner.

Ճաշոց, ի s. missel.

Ճապաղ a. dispersé, répandu, diffus; s. rang, rangée.

Ճապաղեմ, եցի va. disperser, répandre, dissiper; dissiper, distraire; — իմ vn. se disperser, se répandre; s'occuper de, s'appliquer à; se distraire, se dissiper.

Ճապաղիք, ղեաց s. effusion, écoulement; — արեան, effusion de sang, massacre; արեան Ճապաղիս հեղուլ, Ճապաղիս արեան գործել, répandre le sang, verser ou faire couler le sang; բազում — արեան գործեցան իճակատամարտին, il y eut beaucoup de sang répandu dans cette journée.

Ճապաղումն s. dispersion; effusion; distraction; dissipation.

Ճապատիմ, տեցայ vn. se tortiller, s'entortiller, s'allonger, se plier autour, s'entrelacer.

Ճապուկ a. tortueux, sinueux, tortillé; souple, flexible; ընդ —, se glissant, à la hâte; ընդ — անցանել, s'introduire, s'insinuer, passer rapidement.

Ճառ, ից s. discours, allocution, dissertation, harangue; traité, narration, récit; — բարոյական, homélie; — արկանել, prononcer ou faire un discours, parler; — արկեալ խօսել, discourir, pérorer, s'entretenir sur; գրել զՃառս պատմութեանց ուրուք, écrire l'histoire de qn.

Ճառագայթ, ից s. rayon, éclat; —ս արձակել, rayonner, lancer, jeter ou envoyer des rayons.

Ճառագայթաբեր adj. qui porte une couronne de rayons.

Ճառագայթաձեւ a. en forme de rayon, rayonnant, radié.

Ճառագայթածիգ, Ճառագայթաշոյլ, Ճառագայթարձակ a. rayonnant, qui lance des rayons, qui jette de l'éclat, radiant.

Ճառագայթատեսիլ, Ճառագայթաւէտ, Ճառագայթաւոր, Ճառագայթափայլ a. rayonnant, radieux, brillant.

Ճառագայթեմ, եցի vn. rayonner, briller, éclater.

Ճառագայթումն s. rayonnement, radiation.

Ճառագլուխ, լխի s. chapitre.

Ճառագրեմ, եցի va. écrire, décrire.

Ճառական a. de discours; dit, traité, exprimé; littéral; — իմաստք, sens littéral.

Ճառակցեմ, եցի va. écrire, raconter ensemble.

Ճառասաց s. déclamateur.

Ճառասացութիւն s. déclamation.

Ճառատեմ, եցի vn. décla-

mer, faire de belles phrases, débiter, parler en déclamateur.

Ճառեմ, եցի va. faire un discours, discourir, traiter; raconter, réciter, parler, dire, rapporter.

Ճառընտիր, տրի s. choix des discours.

Ճատրակ, Ճատրկուց sm. échecs; — խաղալ, jouer aux —.

Ճար sm. remède, moyen, expédient; չիք —, nչ գոյ —, il n'y a pas de remède, il n'y a pas moyen, c'en est fait; — գտանել, — եւ Ճարակ գտանել, trouver un moyen, un remède, s'aviser d'un moyen; *գլխուն —ը տեսնել, trouver un moyen d'existence, se procurer un asile; V. Ճարակ.

Ճարակ, ագ s. pâture, pâturage, fourrage; fig. pâture, aliment, nourriture, proie; V. Ճար; իրոյ — լինել՝ մատնիլ, être dévoré par le feu, par les flammes, être la proie des flammes, brûler; սրոյ — լինել՝ մատնիլ, périr par le glaive; սրոյ — տալ, faire mourir; բազմախողխող երկաթոյն նա տայր ի—, il moissonnait par le fer tranchant; — լինել, être la proie de, en proie à; Ճար եւ — առնել, trouver un remède; réparer; իմաստութիւն — է սրտի իմոյ, la sagesse nourrit mon cœur; գիտութիւնք — են մտաց, les sciences sont l'aliment de l'esprit; — տալ հերձուածոց, entretenir, fomenter les divisions; առ ի— ախտից, pour alimenter; flatter les passions.

Ճարակաբոյս, բուսոյ sm. plante fourragère.

Ճարակաշատ a. herbeux.

Ճարակատր a. qui paît, qui pâture, paissant, broutant.

Ճարակեմ, եցի va. faire paître, mettre en pâture; fig. dévorer, attaquer, dévaster, consumer; vn. pâturer, brouter, paître, repaître de, se repaître, manger; s'étendre, se propager, se répandre, s'enraciner; յանհնարինս Ճարակէը իսիրտս նոցա, une plaie profonde s'envenimait dans leurs cœurs; որ յոսկերս նորա Ճարակէը, qui se glissait jusque dans la moelle de ses os; բոցն հողմավար ծաւալեալ Ճարակէը, la flamme poussée par le vent s'avançait toujours.

Ճարակեցուցանեմ, ուցի va. faire paître.

Ճարակիմ V. Ճարակեմ.

*Ճարեմ, եցի va. procurer, trouver, s'aviser; V. Ճակատ.

Ճարճատիմ, տեցայ vn. éclater, craquer, se briser par éclats, petiller, décrépiter.

Ճարճատիւն, Ճարճատումն s. craquement, éclat, petillement, crac, cric-crac, crépitation.

Ճարմանդ, ի s. agrafe, boucle; — գրոց, fermoir; խառնել զոզսն ընդ Ճարմանդսն, agrafer.

Ճարմանդեմ, եցի va. agrafer.

Ճարճրուկ s. bot. pissenlit.

Ճարպ, ոյ, ի s. graisse ; suif ; a. gras ; — խոզենի, lard ; — խոզենի հալեալ, saindoux ; օծանել —ով, graisser ; բառնալ զճարպն, dégraisser.

Ճարպապարարտ, Ճարպաւոր adj. graisseux, plein de graisse, adipeux.

*Ճարպիկ, Ճարպիկութիւն V. Ճարտար, Ճարտարութիւն.

Ճարպովին adv. avec sa graisse.

Ճարտասան, ի s. orateur, rhéteur ; éloquent.

Ճարտասանական a. oratoire.

Ճարտասանեմ, եցի vn. parler en orateur, avec éloquence, faire de belles phrases.

Ճարտասանութիւն s. rhétorique, art oratoire ; éloquence.

Ճարտար, աց s. artiste, maître, expert ; ingénieur ; a. adroit, habile, industrieux, ingénieux ; adv. bien, à fond, parfaitement ; — գիտել, savoir bien, à fond ; — իքանդակագործութիւն, qui excelle dans la sculpture ; — իկեղծաւորել, adroit à dissimuler.

Ճարտարաբան, Ճարտարաբանեմ, Ճարտարաբանութիւն V. Ճարտարախօս, Ճարտարախօսեմ, Ճարտարախօսութիւն.

Ճարտարաբար adv. adroitement, d'une manière habile, ingénieusement.

Ճարտարագէտ s. bon connaisseur, expert ; ingénieur.

Ճարտարագիտութիւն sm. génie.

Ճարտարագոյն adv. mieux ; — գիտել, savoir mieux.

Ճարտարագործ s. maître, artiste ; a. fait avec adresse, avec art, bien fait, ingénieux.

Ճարտարադէտ a. qui observe bien, très-éveillé.

Ճարտարախաբ adj. qui trompe bien.

Ճարտարախօս, աց a. s. orateur ; qui parle bien, qui a le talent de la parole, éloquent, disert.

Ճարտարախօսեմ vn. parler bien, avec éloquence, en orateur.

Ճարտարախօսութիւն s. talent de la parole, éloquence ; élégance ; —ք, avec éloquence, disertement.

Ճարտարակ, աց a. adroit, habile.

Ճարտարաձիգ a. qui tire bien, avec beaucoup d'adresse.

Ճարտարամիտ adj. industrieux, ingénieux.

Ճարտարամտեմ, եցի vn. s'ingénier, chercher des expédients, s'aviser de, imaginer, inventer, s'étudier ; sophistiquer, subtiliser, discuter.

Ճարտարամտութիւն sm. adresse d'esprit.

Ճարտարանամ, ացայ vn. devenir adroit, habile, industrieux ; s'ingénier, inventer.

Ճարտարանկան a. qui peint bien.

**Ճարտարանկար** adj. peint avec art.

**Ճարտարանք, նաց** s. invention ingénieuse, affectation, artifice, argutie.

**Ճարտարապետ, ացս.** architecte; maître, auteur; a. très-habile, très-adroit.

**Ճարտարապետական** a. architectural.

**Ճարտարապետեմ, եցի** va. être architecte, être l'architecte de, bâtir, construire avec art, avec adresse.

**Ճարտարապետութիւն** s. architecture; art, habileté.

**Ճարտարապէս** adv. habilement, adroitement.

**Ճարտարասան,** etc. V. **Ճարտասան,** etc.

**Ճարտարասոյզ** adj. artificieux, captieux.

**Ճարտարարուեստ** V. **Ճարտարագործ.**

**Ճարտարացուցանեմ, ուցի** va. rendre adroit, industrieux.

**Ճարտարեմ, եցի** va. s'ingénier, chercher des expédients, s'aviser de, inventer, faire; user de ruses, de détours.

**Ճարտարխօսութիւն** V. **Ճարտարախօսութիւն.**

**Ճարտարմտեմ** V. **Ճարտարամտեմ.**

**Ճարտարմտութիւն** s. artifice, industrie, sophisme, subtilité.

**Ճարտարութիւն** sm. art, adresse, habileté, dextérité; industrie; artifice, ruse, subtilité, détour; sagesse, science, intelligence, génie; —ք, adroitement, avec adresse, artificieusement; մշակական՝ ձեռագործ՝ տուրեւառիկ —, industrie agricole, manufacturière, commerciale.

**Ճարտուկ, Ճարտրուկ** a. pie, gris pommelé; — ձի, cheval pie; — ճանճկէն, rubican, rouan.

**Ճգնազգեաց, Ճգնազգեցիկ** a. qui mène une vie austère, ascète; — կեանք, vie pénitente.

**Ճգնաժամ, ուս.** crise.

**Ճգնական** a. pénible, laborieux, critique, dangereux.

**Ճգնակից** s. compagnon de travail, de peine, de souffrance.

**Ճգնասէր** a. qui aime la vie austère, les peines.

**Ճգնարան, ի** s. ermitage.

**Ճգնաւոր, ացսm.** ermite, solitaire, anachorète; martyr; qui fait des efforts, qui travaille; combattant, athlète.

**Ճգնաւորական** a. ascétique; pénible, laborieux; — կեանք, vie ascétique.

**Ճգնաւորիմ** V. **Ճգնիմ.**

**Ճգնաւորութիւն** s. vie d'ermite, vie ascétique.

**Ճգնեմ, եցի** va. donner de la peine, tourmenter, forcer, presser; mettre en danger.

**Ճգնիմ, նեցայ** vn. se donner beaucoup de peine, se donner de la peine, se fatiguer, travailler, endurer, faire avec peine, avec effort, employer toutes ses forces, souffrir de rudes travaux; se mettre en

danger, risquer, courir le risque; s'adonner à la vie ascétique, mortifier ou affliger son corps; combattre, résister; s'efforcer, tâcher, faire un effort, des efforts, s'étudier, s'attacher, s'appliquer sérieusement à.

**Ճգնողական** V. **Ճգնական**.

**Ճգնութիւն** s. peine, travail, fatigue; labeur; danger; risque; effort; combat, lutte, résistance; vie austère ou ascétique, austérité; mortification, macération; — մահու, agonie.

**Ճգնումն** V. **Ճգնութիւն**.

**Ճգռունք** V. **Ճիգն**.

**Ճեղ** a. qui a le front chauve; s. V. **Ճիւղ**.

**Ճեղանակ, Ճեղենակ** ag s. aigrette de casque.

**Ճեղութիւն** s. difformité de celui qui est chauve sur le front.

***Ճեղք** s. fente.

**Ճեղքեմ**, եցի va. fendre, gercer, crevasser; couper, tailler, inciser, faire une incision, tailler; diviser, séparer, déchirer; —իմ vn. se fendre; se séparer.

**Ճեղքուած**, ոց s. fente, fissure, crevasse, gerçure; coupure, incision, taillade, entaille, déchirure; rupture, ouverture.

**Ճեմ**, ից, ով, օք s. promenade, tour, marche; — առնուլ ou գբօսնուլ ի—, se promener, faire un tour, faire un tour de promenade; —ք նազելիք, démarche languissante; — գնեմի, en se promenant.

**Ճեմական**, աց s. péripatéticien; académicien; —ոն, style académique.

**Ճեմականութիւն** s. péripatétisme.

**Ճեմարան**, աց s. promenade, promenoir; école péripatéticienne; académie, institut; գաղղիական —, l'Académie française; — բանասիրական գիտութեանց, l'Académie des belles-lettres, des sciences; —ք, marche, démarche.

**Ճեմարանական** adj. académique; — նիստ, séance —.

**Ճեմեակ, Ճեմիկ** s. trottoir.

**Ճեմելի, լոյ, լեաց** s. promenade, promenoir, terrasse; promenade, marche; ծառատունկ —, avenue, boulevard.

**Ճեմեմ** V. **Ճեմիմ**.

**Ճեմեցուցանեմ**, ուցի va. promener, faire promener.

**Ճեմիմ**, մեցայ vn. se promener, faire un tour, faire un tour de promenade.

**Ճեմիշ** sm. lieux d'aisances, les lieux, cabinet; երթալ ի—, aller aux lieux, à la garde-robe, au cabinet.

***Ճենճ** V. **Ճենճեր**.

**Ճենճեր, ոց, աց** s. la fumée, la vapeur de la viande et de la graisse brûlées, graisse.

**Ճենճերաձոտ** a. qui exhale une odeur de graisse.

**Ճենճերեմ**, եցի va. exhaler une odeur de graisse, de viande rôtie; brûler; sacrifier; —իմ

vn. brûler, se brûler; ճենճեբեսցի զոհ քո, que votre sacrifice soit agréable; — յիշատակաւ սիրոյ ուրուք, languir.

Ճենճերոտիմ, տեցայ vn. être plein de fumée et de graisse.

Ճեպ, ոյ ou ի, ով s. hâte, diligence, empressement; — զճեպի, — ի ճեպոյ, ճեպով. à la hâte, en toute hâte, avec précipitation; —ս կացուցանել, hâter, presser; —շտապոյ, empressement, hâte.

Ճեպեմ, եցի va. hâter, presser, expédier, précipiter; — զընթացս, redoubler ses pas; vn. V. Ճեպիմ.

Ճեպեցուցանեմ V. Ճեպեմ va.

Ճեպընթաց, ից a. qui court vite; s. diligence (voiture); — լինել, courir vite.

Ճեպիմ, պեցայ vn. se hâter, se dépêcher, s'empresser.

Ճետ, ից s. race, descendants, postérité.

Ճերմակ a. V. Սպիտակ; — երիվար, cheval blanc.

Ճերմակաձի s. cheval blanc; a. qui a un cheval blanc.

Ճերմակեղէն s. linge; *—ը փոխել, changer de —.

Ճեւեղիկ s. loup-garou.

*Ճզմեմ V. Ճմլեմ.

Ճիգն, ճգունք, ճգանց s. effort, tentative, contention, tour de force; travail, peine; fatigue, souffrance; danger, péril, crise; difficulté à surmonter, combat, lutte; — ի—, l'un après l'autre, à côté; զամենայն — յանձին ունել՝ թափել ou իմէջ առնուլ, բազում ճգունս առնել, redoubler d'efforts, faire tous ses efforts, faire un effort surnaturel; — դնել, faire un effort, s'efforcer; դնել զյետին —, faire un dernier effort; յետին ճգամբք զուն գործել, faire les derniers efforts; ճգունք մարտի, les travaux de la guerre; տանել մեծամեծ ճգանց, soutenir de grands combats; ամենայն ճգամբք, de tous ses efforts.

*Ճիզուիտ a. jésuite.

*Ճիզուիտական adj. jésuitique.

*Ճիզուիտութիւն s. jésuitisme.

Ճիկ s. cri; — հանել, faire, jeter un cri, le moindre cri ouvrir la bouche.

Ճիղ, ճղի V. Ճիւղ.

Ճիղմ a. jeune, tendre; — հասակ, jeune âge.

Ճինի V. Ճնի.

Ճիշդ a. exact, juste, ponctuel, précis, strict, rigoureux; adv. V. Ճշդիւ.

լինել՝ գալ, reprendre ses sens, l'usage de ses sens, revenir à soi, à son bon sens, rentrer en soi-même, se réveiller; ընդ միտ տանել, se formaliser, se piquer, se sentir offensé, prendre en mauvaise part; իմառնուլ, comprendre, concevoir, saisir; juger, pénétrer; չառնում ինչ ի միտ, je n'y conçois rien, je m'y perds; չառնու ինչ իմիտ, il n'y entend rien, c'est de l'algèbre pour lui; անմարթ է իմիտ առնուլ զայն, on n'y connaît rien, c'est la bouteille à l'encre; արկանել իմիտս, mettre dans l'esprit, inspirer, suggérer; տալ իմիտ առնուլ, faire comprendre ou sentir; աշխատ առնել զմիտս, fatiguer ou se fatiguer l'esprit; փոխել զմիտս, զրջել իմտաց, changer d'avis, se raviser; ունել իմտի, avoir dans l'esprit, former le dessein, le projet, se proposer, songer, penser; դանել զմիտս ուրուք, plaire ou complaire à qn.; իչար միտս ou *գէշ մտքի առնուլ, prendre en mauvaise part; իբարւոք միտս ou *բարի մտքի առնուլ, prendre en bonne part; ցամբառնալ զմիտս առ Աստուած, élever l'esprit à Dieu; գերել զմիտս, captiver l'esprit; ընդ միտս անկանել ուրուք, *մէկուն միտքը գալ, venir dans l'esprit, dans la pensée de qn., avoir l'idée; դանել ինչ իմտաց ուրուք, ôter qch. de la tête à qn.; միտս ունել, avoir de l'esprit; և ոչ ի միտս անգամ անկեալ էր նորա, il n'avait pas même songé, il ne s'avisait pas seulement; ասել իմտաց, dire de soi-même; ասել ընդ միտս, dire en soi-même; ասէի ընդ միտս, je disais en moi-même; ինոյն միտս լինել, être du même avis; բազում անգամ եղեւ ինձ իմտի, je fus plus d'une fois tenté, j'ai eu plus d'une fois l'idée de; խորհէը ընդ միտս, elle pensait en elle-même; ընդ միտ արկանել, penser, se rappeler, concevoir; բարգաւանել կրթել զմիտս, cultiver, former l'esprit; ստէպ իմտի իմում յեղյեղեմ զայն, je me le redis souvent à moi-même; յորմէ իմիտ առնուլ է, d'où il suit, il s'ensuit que; ըստ մտի, ըստ միտս, à son idée, à sa fantaisie, à son gré, à volonté; commode, aisé; բազումք ի միտս ունողաց, la plupart des gens d'esprit; ոչ ոք ի միտս ունողացն, personne parmi les hommes de sens; սրտի մտօք, de tout son cœur; ուղիղ մտօք, de bonne foi; պարզ մտօք, par le bon sens, sans ruse; ճասարակաց միտք, le bon sens; մարդկեղէն միտք, la raison humaine; *մտքէս ելաւ, cela m'a passé de la tête, m'a échappé, je l'ai oublié; *մտքէ չիանել, ne pas oublier; *միտքը բերել, se rappeler, se souvenir; *միտքը չգալ, ne pas se rappeler;

միտքը պահել, retenir; արդարակորով՝ խորախորհուրդ՝ բաւական իմնճամեծս Թեւակոխելոյ, հաստատուն ու անյողդողդ՝ լուսաւորեալ՝ ընդարձակ՝ Թափանցող՝ սուր՝ վեմ՝ տկար՝ ցրուեալ՝ շփոԹ ՔեՔեւ՝ եռանդուն՝ անարգասաւոր՝ արգասաւոր՝ հնարագիւտ —, esprit juste, profond, propre à concevoir de grandes entreprises, ferme ou solide, éclairé, vaste ou étendu, pénétrant, perçant, élevé, faible, distrait ou dissipé, embrouillé, léger, vif, stérile, fécond, inventif; V. Հասակ, Կասկած, etc.

Միտագոյնս adv. volontiers, de bon cœur.

Միտեալ a. tendant, enclin, porté à; — էր իիրէուԹիւն, il penchait au judaïsme.

Միտեմ, եցի va. pencher, incliner; vn. pencher, incliner, avoir de l'inclination, du penchant, être porté ou enclin à; — սրտի զկնի ուրուք, s'attacher à qn.

ՄիտուԹիւն, Միտումն sm. penchant, tendance, inclination, propension, disposition.

Միտք V. Միտ.

Միրգ, մրգաց ou ոց s. fruit; դալար —, fruit frais.

Միւռինէս s. murène.

Միւռոն V. Մեռոն.

Միւս, ոյ, ով a. autre, un autre; autre, différent; իմիւսում աւուր, l'autre jour; ի միւսոյ ձեռանէ, de l'autre main; մին կամ միւսն, l'un ou l'autre; ոչ մին եւ ոչ միւսն, ni l'un ni l'autre; միւսն, l'autre.

Միւսանգամ adv. une autre fois, de nouveau, derechef, une seconde fois, bis; a. second, autre, nouveau.

Միւսիոն, ի s. mosaïque.

Միւսիոնեայ a. en mosaïque.

Միւրիկէ s. tamaris.

Միօրեայ, բէից adj. d'un seul jour, éphémère; adv. un seul jour; — գեղ, beauté d'un jour.

Միօրինակ adj. uniforme, égal, indifférent; monotone; adv. uniformément, également; — ձեւ, uniformité.

Մլաղաց, ից s. meunier.

Մլաւեմ, եցի vn. miauler; կատու մլաւէ, le chat miaule.

Մլաւիւն s. miaulement.

Մլմլեմ, եցի va. frotter, gratter le visage.

Մլուկն s. punaise.

Մխախառն V. Ծխախառն.

Մխեմ, եցի va. enfoncer, faire entrer, ficher; se saisir de, s'emparer de; tremper; — զձեռն յոք, mettre la main sur qn.; — զձեռն յարիւն ուրուք, tremper la main dans le sang de; — զդաշոյն իլանջս, plonger un poignard dans le sein; —իմ vn. s'enfoncer, se plonger; s'introduire; entreprendre.

ՄխիԹար, աց a. consolant; s. consolateur; consolation; — լինել՝ մատուցանել՝ տալ,

consoler, donner de la consolation.

Մխիթարական a. consolant, soulageant, adoucissant.

Մխիթարակից լինիմ vn. se consoler mutuellement.

Մխիթարանք V. Մխիթարութիւն.

Մխիթարեմ, եցի va. consoler; —իմ vn. se consoler, recevoir des consolations.

Մխիթարիչ s. consolateur.

Մխիթարութիւն s. consolation, baume; ողորմ —, triste consolation.

Մխիմ, խեցայ V. Մխեմ.

Մխիրճ ի յարկանեմ V. Մխրճիմ.

Մխոց, ի, աւ s. action de plonger; piston.

Մխուն V. Մուխ.

Մխրճիմ, ցեցայ vn. s'enfoncer, se plonger.

Մծղնագործութիւն V. Մծղնէութիւն.

Մծղնեայ, նէից a. impur, lascif, libertin, luxurieux.

Մծղնէութիւն s. impureté, lasciveté, luxure.

Մկան s. les reins, le flanc.

Մկանունք, նանց օս նաց s. le dos; fig. la face des ondes, des eaux, flots, ondes, vagues.

Մկթամ, ացի vn. railler, se moquer de.

Մկնականջ, ի s. bot. oreille de souris, myosotis.

Մկնասոխ s. bot. scille.

Մկնաքիս s. musaraigne.

Մկնդահար a. frappé par une hallebarde.

Մկնդաւոր, աց sm. hallebardier.

Մկնդեղ, ոյ s. arsenic.

Մկնորսակ a. qui chasse des souris, des rats.

Մկունդ, կնդաց s. hallebarde.

Մկունք, մկանց s. muscle.

Մկրատ, ի, աւ s. ciseaux.

Մկրտատուն, տան. Մկրտարան, աց sm. baptistère, fonts baptismaux.

Մկրտեմ, եցի va. baptiser; laver, purifier par une ablution; — զգինի, baptiser le vin; —իմ vn. recevoir le baptême, se faire baptiser, être baptisé; se laver, se baigner, se purifier.

Մկրտիչ s. celui qui baptise; saint Jean-Baptiste.

Մկրտութիւն s. baptême; ablution, purification.

Մղեղ, աց s. brin; poussière; cendre.

Մղեղեմ, եցի va. réduire en poussière, en cendres.

Մղեմ, եցի va. pousser, repousser, bousculer; — պատերազմ՝ մարտ՝ ճակատ, livrer un combat, soutenir la guerre, combattre, faire la guerre; —իմ vn. être poussé; մղեցաւ մարտն այգուն, la bataille se donna, fut livrée le matin.

Մղձալանջ, ի s. cauchemar.

Մղձկեմ, եցի va. prendre au cou, étrangler, étouffer, suffoquer; —իմ vn. étouffer, être suffoqué; se dépiter, crever de dépit, de rage.

Մղձկուտ a. étouffant, suffocant, lourd.

Մղձուկ, ձկի s. crève-cœur.

Մղոն, ից ou աց sm. mille (mesure itinéraire).

Մղումն s. impulsion.

Մղտանամ V. ՄՁտանամ.

Մղոն s. impulsion; — տալ, donner une —, pousser.

Մմկիմ, կեցայ vn. se barbouiller, se souiller, se polluer.

Մնամ, ացի vn. rester, demeurer; attendre, s'attendre, espérer; rester, être de reste; rester, durer; մնա խաղաղութեամբ, adieu; V. Կամ.

Մնայուն V. Մնացական.

Մնաս, ից s. mine (poids et monnaie); marc d'argent.

Մնաց, ից a. action de rester, halte; a. stable; V. Կաց մնաց.

Մնացական a. stable, permanent, durable.

Մնացականութիւն s. stabilité, permanence.

Մնացեալ a. ce qui reste, restant.

Մնացորդ, աց. Մնացուած, ոց s. reste, restant, reliquat; résidu; débris; Մնացորդք ou գիրք մնացորդաց, Paralipomènes.

Մնացուցանեմ, ուցի va. faire rester, arrêter; faire cesser, terminer.

Մնիմնայ V. Երեւիլ.

Մնչեմ, եցի va. gémir, roucouler; gémir, crier; Մնչէ աղաւնի՝ տատրակ, la colombe, la tourterelle gémit, roucoule.

Մնչիւն sm. gémissement, roucoulement; gémissement, cri.

Մնչիկ adv. sans bruit.

Մնչկատակ, աց s. pantomime.

Մշակ, աց sm. cultivateur; domestique, garçon.

Մշական a. agricole, rural; —ն, s. géorgique.

Մշակելի a. cultivable.

Մշակեմ, եցի va. cultiver, labourer; fig. cultiver.

Մշակութիւն sm. culture, agriculture; fig. culture; servitude.

Մշկահոտ a. qui a un goût de musc, musqué, muscat.

Մշկապորտ adj. qui a du musc dans son ventre.

Մշտաբարբառ a. qui parle toujours.

Մշտաբացիկ adj. toujours ouvert.

Մշտաբեր a. qui porte, qui produit toujours.

Մշտաբոյծ a. qui se nourrit toujours.

Մշտաբորբոք adj. toujours enflammé, ardent.

Մշտաբուխ, Մշտաբուղխ a. qui jaillit, qui coule toujours, intarissable.

Մշտագիշեր a. toujours dans les ténèbres de la nuit.

Մշտագնաց a. qui marche, qui coule toujours.

Մշտագոյ a. qui existe toujours, éternel.

Մշտադալար adj. toujours vert.

Մշտազուարճ adj. toujours joyeux, toujours renaissant.

Մշտալոյս a. toujours lumineux.

Մշտախաղաց V. Մշտագընաց.

Մշտածիծաղ adj. toujours riant.

Մշտածին a. qui engendre toujours, toujours renaissant.

Մշտակաթ V. Սերմնակաթ.

Մշտակայ V. Մշտագոյ.

Մշտակայլակ a. qui égoutte toujours.

Մշտակառոյց a. bâti pour toujours, très-solide.

Մշտակատար a. qui se fait, qui se célèbre toujours.

Մշտակոյս a. toujours vierge.

Մշտահոս a. qui coule toujours, intarissable.

Մշտամատոյց adj. toujours offert.

Մշտամարտ a. qui combat toujours.

Մշտամտունչ a. qui dit, qui prie toujours; toujours gémissant.

Մշտայաղթ a. toujours victorieux, toujours vainqueur.

Մշտայուշ a. dont le souvenir est éternel; qui se souvient toujours.

Մշտայօժար a. toujours disposé, empressé.

Մշտանորոգ adj. toujours nouveau.

Մշտանուէր V. Մշտամատոյց.

Մշտաշարժ a. qui est toujours en mouvement.

ՄշտաշարժուԹիւն s. mouvement perpétuel.

Մշտաչարչար a. qui souffre, qui est tourmenté toujours; qui tourmente toujours.

Մշտապայծառ a. qui brille toujours, toujours brillant.

Մշտապաշտօն a. qui s'occupe toujours du culte divin, dévot, pieux, fervent; continuel, assidu.

Մշտաջան a. qui travaille toujours, qui fait des efforts continuels.

ՄշտասաղարԹ a. aïophylle, dont les feuilles ne tombent pas, sont toujours vertes.

Մշտասառոյց adj. toujours gelé.

Մշտավառ a. toujours allumé, ardent.

Մշտատատան adj. toujours agité.

Մշտատեւ a. qui dure toujours.

Մշտարթուն adj. toujours éveillé.

Մշտափայլ V. Մշտապայծառ.

Մշտափափաք a. qui désire toujours.

Մշտափթիթ adj. toujours fleuri, toujours renaissant.

* Մշտեմ, եցի va. donner des coups de poing.

Մշտիկ, տկի, տկաւ s. aspersoir, aspergès, goupillon; — զոպայի, un faisceau d'hysope.

Մշտնջեան a. éternel, perpétuel.

Մշտնջենաբար adv. éter-

nellement, perpétuellement, à perpétuité.

Մշտնջենաբուղխ adj. qui coule perpétuellement, intarissable.

Մշտնջենական V. Մշտընջեան.

Մշտնջենականութիւն sm. perpétuation.

Մշտնջենակարգ adj. établi d'une manière éternelle.

Մշտնջենակաց a. qui reste perpétuellement, perpétuel, éternel.

Մշտնջենակեաց adj. qui vit éternellement.

Մշտնջենակից a. coéternel.

Մշտնջենամնունչ V. Մընտամնունչ.

Մշտնջենանամ, ացայ vn. se perpétuer, durer toujours.

Մշտնջենապէս V. Մշտնջենաբար.

Մշտնջենատես a. que l'on voit perpétuellement.

Մշտնջենաւոր, Մշտնջենաւորական a. perpétuel, éternel.

Մշտնջենաւորակից V. Մընտնջենակից.

Մշտնջենաւորակցութիւն s. coéternité.

Մշտնջենաւորեմ, եցի. Մընտնջենաւորիմ, եցայ vn. se perpétuer, durer éternellement; exister, persister, persévérer, continuer, être en permanence.

Մշտնջենաւորութիւն s. perpétuité, perpétuation, éternité.

Մոգ, ագ, ուց s. mage, magicien.

Մոգական a. magique; — լապտեր, lanterne magique; —ն s. magie, art magique.

Մոգակրօն, Մոգակրօնիկ a. qui a la religion des mages.

Մոգեան s. pl. les mages.

Մոգեմ, եցի va. faire des tours de sorcellerie, charmer; — զուշ եւ զուրուշ, enchanter les sens, charmer l'esprit.

Մոգութիւն s. magie, art magique; la religion des mages; opération magique, charme.

Մոգպաշտ s. serviteur d'un mage.

Մոգպետ, ագ s. archimage.

Մոգպետութիւն sm. archimagie.

Մոզանամ, ացայ vn. rester, durer.

Մոզի, զւոյ s. veau.

Մոլաթոյս a. sauvage, mauvais.

Մոլաթզենի, նւոյ sm. sycomore.

Մոլաթուզ, թզոյ s. sycomore; fruit du sycomore.

Մոլախիղդ, խնդի s. ciguë.

Մոլախոտ, ոյ s. mauvaise herbe, sarclure.

Մոլախոտեմ, եցի. Մոլախոտիմ, տեցայ vn. être plein de mauvaises herbes.

Մոլաձիթենի, նւոյ s. olivier sauvage.

Մոլար adj. errant; erroné, faux; égaré; — աստղ, étoile errante, planète.

Մոլարանուն a. qui porte un faux nom, faux, erroné.

Մոլեբար V. Մոլեգնաբար.

Մոլեգին a. furieux, furi-

bond, fougueux, maniaque, enragé, acharné ; V. Մոլեգնաբար.

Մոլեգնաբար adv. avec fureur, avec acharnement, furieusement, comme un furieux.

Մոլեգնական V. Մոլեգին.

Մոլեգնիմ, նեցայ vn. être furieux, transporté de rage, se livrer à la fureur, enrager ; être hors de soi, tomber en démence, s'extasier.

Մոլեգնոտ V. Մոլեգին.

Մոլեգնութիւն, Մոլեգնուցք s. fureur, manie, furie, rage, acharnement, fougue, transport ; érotomanie, passion violente.

Մոլեխինդ V. Մոլախինդ.

Մոլեկան V. Մոլի.

Մոլենախանձ adj. s. cruel dans sa jalousie ; fanatique.

Մոլեռանդն a. s. fanatique.

Մոլեռանդութիւն s. fanatisme.

Մոլի, լւոյ a. furieux, frénétique, maniaque, forcené, fou ; * vicieux.

Մոլիմ, լեցայ vn. être, devenir furieux, fou ; fig. se passionner, aimer passionnément, à la folie, être fou d'amour, être épris de ; — զիետ, se passionner, s'acharner après.

Մոլինեան s. moliniste.

Մոլինականութիւն s. molinisme.

Մոլոշ, ի s. mauve.

Մոլոր V. Մոլար.

Մոլորակ, ագ sm. planète.

Մոլորական a. errant, vagabond ; faux, erroné ; s. trompeur ; — աստղ, étoile errante.

Մոլորամիտ a. qui est dans l'erreur.

Մոլորանք, նաց s. action d'errer, course vagabonde.

Մոլորապատիր adj. faux, trompeur.

Մոլորեալ a. égaré ; — աստղ, étoile errante, planète.

Մոլորեմ V. Մոլորիմ.

Մոլորեցուցանեմ, ուցի va. entraîner dans l'erreur, induire en faute, égarer, séduire, détourner, écarter du chemin, désorienter.

Մոլորեցուցիչ s. séducteur, corrupteur, imposteur.

Մոլորիմ, րեցայ vn. s'égarer, se fourvoyer, errer, se désorienter ; tomber dans l'erreur, faillir, se tromper, être induit en erreur, être séduit ; V. Մոլիմ.

Մոլորութիւն s. erreur, égarement ; séduction ; action d'errer, course vagabonde ; fureur, manie, folie ; — մտաց, erreur d'esprit, aberration des idées ; ծայրայեղ —, étrange extrémité, excès.

Մոլուցիւն s. manie, folie, fureur, passion violente, transport, enthousiasme ; * vice.

Մոլուցք V. Մոլեգնուցք.

Մոխիր s. cendre ; օր մոխրոց, jour des cendres ; ապաշխարել մոխրով, faire pénitence dans la cendre.

Մոխրագոյն adj. couleur de cendre, cendré, gris.

Մոխրալից a. plein de cendre, cendreux.

Մոխրակոյտ, կուտից sm. amas de cendre.

Մոխրահեղձոյց առնեմ va. étouffer, suffoquer dans la cendre.

Մոխրանոց, աց s. cendrier.

Մոխրապաշտ, ից, աց a. qui adore la cendre.

Մոխրապաշտութիւն s. adoration des cendres.

Մոխրաջուր, ջրոյ s. lessive; լուանալ —ով, lessiver.

Մոխրասէր adj. qui aime la cendre.

Մոխրատեսակ a. semblable à la cendre, cendré.

Մոխրատարած խշտիք s. lit semé de cendre.

Մոխրատուն V. Մոխրանոց.

Մոխրատունկ, տնկոյ s. cinéraire.

Մոխրացան adj. semé de cendres.

Մոխրեմ, եցի va. réduire en cendres

Մոխրոց, աց s. cendrier.

Մոմիր, ծրոյ s. poussière de charbon, menu charbon.

Մողէզ, զեզի s. lézard.

Մոմ, ոյ, ով s. cire; cierge, bougie; լուցանել՝ վառել զ—, allumer la bougie.

Մոմագործ, աց s. cirier,

Մոմազօծ կտաւ s. toile cirée.

Մոմակալ, ի s. bougeoir.

Մոմակերտ a. fait de cire.

Մոմանման a. en forme de cire.

Մոմապատ a. ciré, enduit de cire; V. Գժատ.

Մոմավաճառ, աց s. marchand de cire, de cierges et de bougies.

Մոմեայ a. de cire.

Մոմեղէն, ղինաց a. de cire; s. cire, cierge, bougie.

Մոմեղինակալ, աց s. chandelier.

Մոմիայ V. Մումիայ.

Մոմնեմ, եցի vn. cirer, enduire de cire.

* Մոմշոր, ոյ s. toile cirée.

Մոմոս V. Միմոս.

* Մոմպատ V. Գժատ.

Մոյգ V. Մոյկ.

Մոյն, մունից s. étai, appui, soutien, accotoir, pilier, pilastre, étrésillon, étançon; — դնել, étayer, étançonner, étrésillonner.

Մոյկ s. galoche.

Մոյն s. beauté, couleurs; զմոյն տմոյն առնել, altérer la beauté, détruire les couleurs.

Մոյր, մուրոյ s. mendicité; aumône; ի— ելանել՝ շրջել, mendier, demander l'aumône, tendre la main.

Մոշայ, ից. Մոշավայրի, Մոշենի, նուոյ s. bot. tamaris, genêt.

Մոռանամ, ացայ va. oublier, mettre en oubli; — զասելին, rester court; —իմ vn. s'oublier, être oublié.

Մոռացկոտ, աց a. oublieux.

Մոռացումիւն s. oubli.

Մոռացումն s. oubli; ի— անկանիլ՝ գալ, tomber dans l'—; — առնել, mettre en —, laisser tomber en —, faire oublier.

Մոռացուցանեմ, ուցի va. faire oublier.

Մոռացօնք s. oubli; — լինել, s'oublier, être oublié, tomber dans l'—; իմոռացօնս ածել, faire oublier; իմոռացօնս դարձուցանել՝ արկանել, մոռացօնս առնել, oublier, mettre ou laisser tomber dans l'—, laisser dans l'—.

* Մոռնամ V. Մոռանամ.

* Մոռցնեմ V. Մոռացուցանեմ.

Մովսիսաբեր a. apporté par Moïse.

Մովսիսագիր adj. écrit par Moïse.

Մովսիսադիր a. établi par Moïse.

Մովսիսական a. mosaïque.

Մոր, ի s. framboise.

Մորենի, նոյ sm. buisson ardent, pyracanthe.

Մորթ, ոց sm. peau; cuir; dépouille; — մարդոյ, peau, derme.

Մորթագործ, ացս. peaussier, corroyeur.

Մորթազգեստ adj. vêtu de peau.

Մորթազերծ a. dépouillé de sa peau, écorché.

Մորթանեղկ, ացս. teinturier de peaux; a. dont la peau est teinte.

Մորթանք, նաց sm. action d'écorcher, de dépouiller de sa peau.

Մորթեան s. pl. les peaux.

Մորթեղէն a. de peau.

Մորթեմ, եցի va. dépouiller de sa peau, ôter la peau, écorcher; tuer, égorger.

Մորթի, թւոյ s. peau.

Մորթիկ s. petite peau.

Մորի, ւոյ, րաց s. tanière, repaire; bot. framboisier.

Մորմ, ոյ s. bot. vomiquier, strychnos.

Մորմենի V. Մորենի.

Մորմոք, Մորմոքանք, նաց sm. regret, douleur, déchirement.

Մորմոքեմ, եցի. Մորմոքեցուցանեմ, ուցի va. causer de la douleur, causer une vive douleur, un grand regret, faire regretter, faire vivement souffrir, déchirer, fendre, navrer.

Մորմոքիմ, քեցայ vn. éprouver de la douleur, regretter, souffrir vivement; être navré, être touché, s'attendrir.

Մորմոքումն V. Մորմոք.

Մորոս, աց a. fou, insensé, extravagant, sot, imbécile.

Մորոսաբանութիւն sm. discours insensé, extravagant.

Մորոսական V. Մորոս.

Մորոսանամ, ացայ vn. devenir fou, insensé.

Մորոսախօսութիւն s. discours insensé, bêtise.

Մորոսութիւն s. folie, sottise.

Մորուք V. Մօրուք.

Մոցեմ, եցի vn. éloigner, écarter, séparer; — իկաթին սովորութենէ, sevrer.

Մուգ, մզոյ s. extrait, jus.

Մուժ, մժոյ, ով. Մութն, մժան s. obscurité, ténèbres; a. obscur, ténébreux; իմժի.

խաւան, dans l'obscurité, dans les ténèbres.

Մուխ a. trempé, acéré; ardent, enflammé; s. trempe; fumée; *tabac; *— քաշել, fumer, fumer du tabac.

Մուծանեմ, ծի va. introduire, faire entrer, fourrer, insérer; mener dans, amener, conduire à.

Մուծանող s. introducteur.

Մուկն, մկան, մկունք s. souris; մեծ —, rat; — չչէ, la souris siffle; V. Մկունք.

Մուղ a. dompté, apprivoisé.

Մուճակ, ացս sm. soulier, chaussure.

Մուճակաձիգ sm. chausse-pied.

Մումիայ, ի s. momie.

Մուն, մնոյ, ով sm. ciron, moucheron.

Մունետիկ, տկի sm. crieur public.

Մունջ, մնջոյ a. muet.

Մուշկ, մշկոյ s. musc; civette.

*Մուշտ s. coups de poing.

Մուշտակ, ացս sm. pelisse, fourrure.

Մուշտակագործ, Մուշտակավաճառ, ացս sm. pelletier, fourreur.

Մուսա, այից s. muse.

Մուսէոն, ացս s. musée.

Մուտ, մտի, մուտք, մտից s. entrée, introduction, accès, abord; porte d'entrée, avenue; recette, revenu; commerce charnel; — արեւու, le coucher du soleil; le couchant, l'occident, l'ouest; — աստղ, immersion d'un astre; — առնել, faire son entrée, entrer, s'introduire; — ու մուտս գտանել, trouver accès, avoir entrée, s'introduire, s'insinuer, être reçu; համարձակ — շնորհել առ ինքն, donner un libre accès auprès de lui; իմուտս լինել, se coucher (en parlant du soleil); — եւ ել առնել ուրեք, se promener; իմանալ զմուտ եւ զել ուրուք, savoir tous les desseins, tous les actes de qn.

Մուր, մրոյ, ով s. noir de fumée, suie; encre; — տալ, faire un pied de nez.

Մուրական a. mendiant; s. mendicité.

Մուրամ, ացի. Մուրանամ, ացայ va. mendier, faire le mendiant, demander l'aumône, gueuser.

Մուրացածոյ, ից a. mendié, emprunté.

Մուրացիկ, ցկաց sm. mendiant, gueux; a. mendié, emprunté; — շրջել V. Մուրանամ.

Մուրացկան, Մուրիկ V. Մուրացիկ s.

Մուրկ, մրկաց s. épis de froment que l'on mange grillés.

Մուրկան շրջիմ vn. mendier.

Մուրհակ, ացս s. obligation, contrat, billet; bulletin, cédule, acte, instrument; — ընդունելութեան, reçu, récépissé; — հատուցման, quittance, acquit.

ուրն, մրանց s. marteau.

Մուրող, աց s. mendiant.

Մուրողութիւն s. mendicité.

Մուրտ, մրտի, մրտոյ sm. myrte.

Մռայլ s. brouillard, obscurité; a. sombre, obscur.

Մռզգայլիմ V. Մգռեմ.

Մռմռամ, ացի. Մռմռեմ, եցի vn. murmurer, bougonner, grogner, grommeler; — ընդ միմեանս, se disputer, s'acharner les uns sur les autres; մռմռեալ ալիք, flots irrités.

Մռմռող s. qui murmure, grognard, grognon, grogneur.

Մռմռումն sm. murmure, grognement.

* Մռմռուկ V. Քաղցու.

Մռնչական V. Մռնչող.

Մռնչեմ, եցի vn. rugir; mugir, frémir.

Մռնչիւն sm. rugissement; mugissement, frémissement.

Մռնչող s. a. rugissant; mugissant, frémissant.

Մսագործ, աց s. boucher.

Մսագործութիւն sm. boucherie.

Մսալից a. charnu.

Մսակ, ակ s. caroncule.

Մսակեր, ակեր a. qui mange de la viande, carnivore, carnassier.

Մսակերութիւն sm. action ou coutume de manger de la viande.

Մսաճան, ացի sm. grande fourchette pour la viande.

Մսաճառ լինիմ vn. se priver, s'abstenir de la viande.

Մսան, ի, նունք, նաց ou նանց s. rouelle.

Մսապատ a. enveloppé de viande, charnu, potelé.

Մսավաճառ, ացի s. boucher.

Մսավաճառանոց, ացի sm. marché à la viande; boucherie.

Մսգին s. prix de la viande.

Մսեղ a. charnu, potelé.

Մսեղէն a. de viande, de chair.

Մսեղի, ղւոյ, ղեաց a. de viande, de chair; s. homme.

Մսիմ, սեցայ vn. avoir froid; attraper froid, une fraîcheur, se refroidir.

Մսխեմ V. Վատնեմ.

Մսխող s. dépensier.

* Մսկոտ V. Զովամարմին.

Մսոտ, Մսուտ a. charnu.

Մսուտու a. gras; — օր, jour —.

Մսուր, մսրոց sm. crèche, mangeoire; — բերանոյ, l'intérieur de la bouche.

Մտաբախ a. fou, timbré, toqué, frénétique.

Մտաբախութիւն s. folie, démence, frénésie.

Մտաբերեմ, եցի vn. se rappeler, se souvenir; s'aviser, penser, se proposer, songer, imaginer, concevoir; attenter, intenter, mettre la main à, se mettre à, s'adonner, se livrer, se porter à, s'acharner après.

Մտաբերեցուցանեմ, ուցի va. faire penser; engager, entraîner.

Մտաբերիկ լինիմ V. Մտաբերեմ.

Մտադիր, դրաց a. attentif, appliqué, soigneux, vigilant; — լինել, être attentif, faire attention à, s'appliquer à.

Մտադիւր adj. empressé, prompt; — ou — սիրով adv. volontiers, avec empressement, de bon cœur, de bon gré, de grand cœur, très-volontiers, avec plaisir.

Մտադիւրագոյն, Մտադիւրագոյնս V. Մտադիւր adv.

Մտադիւրութիւն s. empressement, bonne volonté, bon gré; —ք V. Մտադիւր adv.

Մտադրութիւն s. attention, application, soin; —ք, avec attention, attentivement.

Մտաճափ a. écervelé, timbré, tête fêlée.

Մտաճափութիւն s. aliénation d'esprit, démence.

Մտախաբ, աց r. trompeur, séducteur.

Մտմտախոհ, Մտախորհ a. pensif, penseur, pensant, rêveur; — լինել, penser, former dans son esprit, projeter, réfléchir, méditer, se creuser la tête.

Մտախոհութիւն s. réflexion, méditation.

Մտածեմ, եցի va. penser, méditer, considérer.

Մտածին V. Մտացածին.

Մտածութիւն s. pensée, méditation, réflexion, considération, idée.

Մտակոծ լինիմ vn. avoir l'esprit agité, tourmenté.

Մտակորոյս a. insensé, fou.

Մտահաճ a. présomptueux; agréable.

Մտահաճոյ adj. agréable, qui charme l'esprit, qui fait plaisir.

Մտահաճութիւն s. prévention, préjugé.

Մտահաս adj. intelligible, compréhensible.

Մտահասուստ a. très-intelligent, très-spirituel.

Մտայոյզ a. qui a l'esprit agité, soucieux, rêveur, inquiet, ému; — առնել, agiter l'esprit, inquiéter, donner de l'inquiétude, causer du souci; — լինել, avoir l'esprit agité, s'inquiéter, se mettre en peine; մինչդեռ — իխորհուրդս յայսոսիկ, pendant que ces pensées roulaient dans mon esprit.

Մտայուզութիւն s. agitation d'esprit, souci, inquiétude.

Մտայօժարութիւն s. bonne volonté, empressement.

Մտանելի a. celui qui entre.

Մտանեմ, մտի, մուտ vn. entrer; s'introduire, se fourrer, pénétrer, se glisser dans, s'insinuer; — առ ոք, aller chez qn., se présenter à lui, l'aborder; — առ կին, s'approcher d'une femme, avoir commerce avec; մտանէ արեգակն, le soleil se couche; ի— արեւու, au coucher du soleil; իդատ' իդատաստան —, actionner qn., intenter un procès; se présenter en justice, comparaître; իփորձ —, prouver, essayer, faire l'essai, l'expérience de;

ընդ քիրտն —, suer, se donner beaucoup de peine; — ինաւ, monter sur un vaisseau, s'embarquer; — ընդ անձին, se faire la guerre; — ինեըքս, s'introduire; V. Լուծ, Գինի, etc.

Մտառուս, ացս a. intelligent.

ՄտառուԹիւն sm. intelligence.

Մտավարժ, իս a. qui a un esprit cultivé, intelligent.

ՄտավարժուԹիւն s. esprit cultivé, intelligence.

Մտատանջ a. inquiet, soucieux; — լինել, être inquiet, soucieux, être sur le gril.

ՄտատանջուԹիւն s. inquiétude, souci, tourment.

Մտացածին a. imaginaire, idéal, chimérique, fantastique, fabuleux.

Մտացի, ցւոյ, ցեաց a. intelligent, spirituel, sensé; — լինել, avoir de l'esprit.

Մտաւոր, ացս a. intellectuel, intellectif, spirituel; intelligent, doué d'intelligence.

Մտաւորաբար adv. mentalement, idéalement.

Մտաւորական a. intellectuel, spirituel; mental, idéal.

ՄտաւորուԹիւն s. intelligence.

Մտերիմ, րմի, մաց a. intime, cordial, confident, favori, familier, étroit.

Մտերմաբար adv. intimement, cordialement, confidentiellement, familièrement.

Մտերմանամ, ացայ vn. entrer dans l'intimité, dans la confidence, s'attacher, se familiariser.

ՄտերմուԹիւն s. intimité, cordialité, confidence, familiarité, attachement; — ք V. Մտերմաբար.

Մտուցանեմ V. Մուծանեմ.

Մտրակ, ացս s. cravache, fouet; — իկուշտ առնել, donner un coup de cravache.

Մտրակեմ, եցի va. fouetter, cingler, donner des coups de cravache.

Մտրուկ, ըկաց s. poulain, pouliche, jeune cheval.

Մրագիր a. écrit avec de l'encre.

Մրադիր, Մրազարդ a. noir; — յօնք, sourcils noirs.

Մրայօն a. qui a les sourcils noirs.

Մրափ V. Նիրհ.

Մրափեմ V. Նիրհեմ.

Մրգաբեր, ացս a. qui porte des fruits; — ծառ, arbre fruitier.

Մրգաթափ առնեմ va. faire tomber les fruits.

Մրգակեր, ացս adj. carpophage.

Մրգամատոյց V. Մրգաբեր.

Մրգաջուր, ջրոյ s. jus de fruits.

Մրգապահ, ացս s. gardien des fruits.

Մրգաւէտ a. abondant en fruits.

Մրգիկ s. petit fruit.

Մրգուզ a. vil, abject, obscur.

Մրեմ, եցի va. enfumer, noircir par la fumée.

Մրկեմ, եցի va. rôtir, brûler.

Մրնոտ a. noirci par la fumée, enfumé.

Մրնոտեմ, եցի va. enfumer, noircir de fumée; —իմ vn. s'enfumer, être noirci par la fumée.

Մրմնջեմ, եցի va. murmurer, marmotter; fredonner; gémir; se moquer, railler.

Մրմունջ, մնջոց s. murmure, fredon; gémissement.

Մրմռիմ V. Մռմռամ.

Մրոտիմ V. Մրնոտիմ.

Մրուր, մրրոց s. lie, dépôt, marc, sédiment, résidu, vase; — տալ, causer de la douleur, faire souffrir; faire un pied de nez; քամել զամենայն մրուրս դառնութեան բախտին, épuiser toutes les rigueurs de la fortune; — գինւոյ, lie de vin.

Մրջիմն, ջման. Մրջիւն, ջեան s. fourmi.

Մրջինոց, աց sm. fourmilière.

Մրջմնակեր a. mangé par les fourmis.

Մրջմնառիւծ, Մրջնառիւծ, ուց s. fourmi-lion.

Մրջմնոց, աց s. fourmillement.

Մրսիմ V. Մսիմ.

Մրտենի, նւոյ, նեաց. Մրտի, տւոյ s. myrte.

Մրրախառն a. mêlé de lie.

Մրրատեսակ a. qui ressemble à de la lie; de lie.

Մրրիկ, րկաց s. tempête, orage, ouragan, tourbillon, bourrasque, gros temps; — ծխոյ՝ բոցոյ, tourbillon de fumée, de flammes; սեաւ —, noire tempête.

Մրրիմ, րեցայ vn. déposer, laisser un sédiment.

Մրրկաբեր a. qui amène des orages, orageux.

Մրրկալից, Մրրկախառն a. plein d'orages, orageux, tempêteux.

Մրրկածին a. qui produit la tempête, orageux.

Մրրկածուփ a. agité par la tempête.

Մրրկեմ, եցի va. agiter par la tempête, bouleverser; —իմ vn. être agité par la tempête, tempêter, tourbillonner, s'agiter; մրրկէր ծուխ ընդ երկին, un tourbillon de fumée montait jusqu'au ciel.

Մրցական V. Ըմբիշ, Ըմբշական.

Մրցամարտք, տից s. lutte.

Մրցանակ, աց s. prix du combat, du concours; combat, lutte; — առնուլ, avoir, obtenir un prix; տանել զ—, remporter le prix; մեծ —, grand prix.

Մրցանք, նաց s. lutte, concours, concurrence.

Մրցարան, աց s. lice, arène.

Մրցիմ, ցեցայ vn. combattre, lutter, engager une lutte; rivaliser avec, concourir, entrer en concurrence avec, aller sur les brisées; մրցելով իմն, à l'envi.

Մրցող s. concurrent, rival.

Մրցութիւն, Մրցումն sm.

combat, lutte; concours, lutte d'émulation, rivalité, concurrence.

Մցուեմ, եցի vn. bâfrer, se gorger, se remplir la panse.

Մօտ prép. adv. près, proche, auprès; — լինել, être près; ի— կալ, se tenir près, être auprès, tout près de; — առ —, tout près; — կտրել, couper tout court; իմօտոյ, իմօտէ, ընդ մօտոյ, — ընդ —, de près; prochainement, bientôt.

Մօտալուտ a. imminent, prochain, pressant; —վտանգ, danger imminent; — լինել, être imminent, menacer.

Մօտակայ, ից. Մօտակաց, աց a. qui reste près, assistant, présent, voisin.

Մօտակտուր լինիմ vn. être coupé tout court, être tranché par les racines.

Մօտաֆաս, ից s. accessit; — լինել, obtenir un —.

Մօտասեր a. proche, proche parent.

Մօտաւոր, աց a. proche, prochain, voisin, assistant; présent.

Մօտաւորիմ, բեցայ vn. s'approcher.

Մօտաւորութիւն s. approche, rapprochement, proximité, voisinage.

Մօտաքաղաք, աց s. ville près de la capitale.

Մօտեմ, եցի va. approcher, rapprocher, faire rapprocher.

*Մօտենամ V. Մօտիմ.

*Մօտեցնեմ V. Մօտեմ.

*Մօտիկ adv. tout près.

Մօտիմ, տեցայ vn. approcher, s'approcher ou se rapprocher de.

Մօր, ից s. bourbe, bourbier, marais, mare, marécage.

Մօրաբար adv. comme un marais; a. de marais.

Մօրական a. de marais, marécageux.

Մօրանամ, ացայ vn. croupir, dormir, être stagnant, former un marais.

Մօրասէր a. qui aime les marais.

Մօրատ V. Մօր.

Մօրացեալ a. croupissant, stagnant.

Մօրաքեռադուստր, դստեր s. cousine.

Մօրաքեռորդի, դուոյ sm. cousin.

Մօրաքոյր, քեռ s. tante, sœur de la mère.

Մօրեղբայր, բօր s. oncle, frère de la mère.

Մօրեղբօրադուստր, դստեր s. cousine.

Մօրեղբօրորդի, դուոց sm. cousin.

Մօրին V. Մօրական.

Մօրու, աց s. belle-mère, marâtre.

Մօրուանի, նուոյ, նեաց adj. barbu.

Մօրուարձակք s. tempe.

Մօրուեղ, աց a. barbu.

Մօրուք, րուաց s. barbe; աճելել զմօրուս ուրուք ou *մէկուն —ն աճիլել, faire la

— ձ զո., le raser; աճելել զմօրուս իւր օu —ն աճիլել, se faire la —; — Թողուլ, laisser croître, laisser pousser sa —; * —ը կբուսնի, sa — pousse; * —ը ներկել, se teindre la —; սպիտակ օu սպիտակափառ՝ երկայն՝ մեծ՝ աղեբեկ՝ գեղեցիկ՝ տգեղ՝ Քաւ՝ անյարդար —, barbe blanche, longue, grande, grise, belle, vilaine, fournie, négligée.

Մօրուտ s. Bot. tubéreuse.

Մօրտանալ V. Մօրանամ.

# Յ

Յ (hi) s. vingt et unième lettre de l'alphabet et seizième des consonnes; trois cents, trois-centième.

Յագ s. satiété, rassasiement; a. rassasié; ց—, à satiété; ց—ուտել եւ ըմպել, manger et boire son soûl, tout son soûl, tout son content.

Յագենամ V. Յագիմ.

Յագեցութիւն, Յագեցումն s. satiété, rassasiement, assouvissement.

Յագեցուցանեմ, ուցի va. rassasier, assouvir; — զաչս, rassasier ses yeux.

Յագեցուցիչ a. rassasiant.

Յագիմ, եցայ vn. se rassasier, s'assouvir; չյագէր իհայելոյ, il ne pouvait se lasser de le regarder.

Յագութիւն, Յագումն V. Յագուրդ.

Յագուրդ s. rassasiement, satiété; ի—, pour assouvir; ի— փառամոլութեան իւրոյ, pour contenter son ambition; — առնել ագահութեան, assouvir son avarice.

Յագչիմ vn. aller bien (en parlant des vêtements).

Յադգդեմ, եցի va. pousser.

Յազաձոյ adj. immolé, sacrifié.

Յազեմ, եցի va. immoler, sacrifier.

Յախերկան adv. en vain, inutilement.

Յախճապակ, ագ s. porcelaine.

Յախճապակեայ a. de porcelaine.

Յախճապակի, կւոյ s. porcelaine.

Յախնիոր, Յախնիորագոյն a. servile, grossier, vil, commun.

Յախորտ adj. audacieux; յախորտի կալ V. Խուժդն.

Յախուռն adj. audacieux, hardi, téméraire; adv. audacieusement, témérairement, précipitamment, au hasard, avec précipitation, tête baissée, à corps perdu, avec impétuosité; — քաջութիւն, courage bouillant; — խիզախել, s'exposer témérairement.

Յաճախք, նաց s. distraction, dissipation.

Յաճեմ, եցի. Յաճեցուցանեմ, ուցի va. promener, amener, faire marcher ou parcourir, mener, conduire çà et là, rouler, trôler; — զաչս, promener, rouler les yeux; շուրջ — զաչս, parcourir des yeux.

Յաճիմ, ծեցայ vn. parcourir, se promener, rôder, flâner, trôler, courir ou errer çà et là, rouler, vaguer, circuler; — ընդ ծով եւ ընդ ցամաք, courir les mers et la terre.

Յաճուումն s. l'action de parcourir, circulation; agitation.

Յականեմ, եցի va. regarder; garder, inspecter, surveiller.

Յական Ծօխափել V. Ծօխափեմ.

Յակինթ, կնթի, Ցաւ s. bot. jacinthe; minér. hyacinthe.

Յակնթակապ a. monté de hyacinthes.

Յակոբուկ s. bot. alkékenge.

Յակուրչի sm. balançoire, brandilloire.

Յակրի, ւոյ s. ronce.

Յահուր V. Յախուռն adv.

Յաղագս prép. pour, à cause, en faveur de, pour l'amour de.

Յաղադարձիմ, ձեցայ vn. se conduire d'une manière déréglée, se livrer à la débauche.

Յաղածոյք s. salaison, mets salés.

Յաղեմ, եցի va. saler, assaisonner de sel.

Յաղիչ s. saleur.

Յաղումն s. salaison.

Յաղթ a. grand, démesuré, énorme, gros, gigantesque; vaste, immense; fort, puissant, victorieux; beaucoup de, abondant, considérable.

Յաղթական a. triomphal, victorieux, triomphant; sm. triomphateur, vainqueur; — լինել, vaincre, triompher.

Յաղթահասակ a. de grande taille, gigantesque, colossal.

Յաղթահարեմ, եցի va. vaincre, prévaloir contre; convaincre, confondre; opprimer, vexer.

Յաղթահարիչ a. convaincant; oppressif.

Յաղթահարութիւն s. défaite; oppression.

Յաղթամարմին a. qui a un corps énorme, corpulent.

Յաղթանակ, ացս sm. prix du combat, palme, lauriers; triomphe, victoire; a. triomphant; — աւ, en triomphe; — կանգնել իվերայ, triompher de, l'emporter sur; — տանել, obtenir un triomphe.

Յաղթանակեմ, եցի va. triompher, remporter la victoire, l'emporter sur.

Յաղթանակող s. triomphant, triomphateur.

Յաղթանդամ a. membru, grand, gros.

Յաղթանդամութիւն s. grosseur.

Յաղթանք, նաց s. victoire.

Յաղթաջուր a. qui a beaucoup d'eau.

Յաղթասէր a. qui aime à vaincre; qui aime les disputes.

Յաղթասիրեմ, եցի vn. aimer à vaincre; aimer les disputes.

Յաղթասիրութիւն s. amour de la victoire, désir de vaincre; amour des disputes, esprit querelleur.

Յաղթեմ, եցի va. vaincre, l'emporter sur, avoir ou prendre le dessus, triompher de, surpasser, franchir; — ներքինակաց ou *արգելներու —, vaincre, surmonter, franchir les obstacles; — պատերազմի, gagner la bataille; — ցաւոցն, surmonter son chagrin; *իւր կարծիքն յաղթեց, son opinion a prévalu; V. Դատաստան.

Յաղթեցուցիչ a. qui fait vaincre.

Յաղթկու, Յաղթող s. vainqueur; a. triomphant, victorieux.

Յաղթողական V. Յաղթական.

Յաղթութիւն sm. victoire, triomphe, succès, avantage; grandeur, grosseur; ունել՝ տանել՝ ստանալ զ—, remporter la victoire, être maître de la victoire, l'emporter sur, être victorieux; լի բովանդակ ունել զ—, remporter une pleine victoire; տանել լի բովանդակ զ—, remporter une entière victoire; կատարեալ —, victoire décisive; — կանգնել, remporter une victoire; կանգնել —ս իվերայ, triompher de; մեծապանծ —ս իգլուխ տանել, remporter de grands avantages.

*Յաղթուիմ, եցայ vn. être vaincu.

Յաղթուկ V. Յաղթող; atout (carte).

*Յաղթուող a. vaincu.

Յաղկիմ, կեցայ vn. se décomposer, se gâter.

Յաճախ, ացս a. fréquent, multiplié, répété; adv. fréquemment, souvent; —ք s. continuité, perpétuité.

Յաճախաբար V. Յաճախ adv.

Յաճախագոյն adv. plus souvent, très-souvent.

Յաճախագունդ a. composé de plusieurs troupes, très-nombreux; — ճամբար, armée innombrable.

Յաճախագունք V. Բազմագունք.

Յաճախական a. fréquentatif.

Յաճախապաշտօն, տաճան a. où il y a souvent des cérémonies religieuses.

Յաճախապատում adj. qui raconte souvent; dogmatique.

Յաճախատես լինիմ vn. voir ou se laisser voir souvent.

Յաճախեմ, եցի vn. rendre fréquent; multiplier, augmenter, accroître, redoubler, grossir; vn. fréquenter, hanter; multiplier, augmenter, s'accroître, affluer.

Յաճախեցուցանեմ V. Յաճախեմ va.

Յաճախիմ V. Յաճախեմ vn.

Յաճախող, Յաճախորդ s. qui fréquente, client, pratique.

Յաճախութիւն, Յաճախումն s. fréquence; grande quantité, grand nombre, augmentation, affluence, multitude, foule; fréquentation.

Յամայր a. longtemps; — ամս՝ ամօք, de longues années, durant des siècles infinis.

Յամառ, ացի a. opiniâtre, obstiné, entêté, têtu; acharné, buté, tenace.

Յամառեմ, եցի. Յամառիմ, ռեցայ vn. s'opiniâtrer, s'obstiner, s'entêter, se mutiner; se buter, persister, insister, s'acharner; յամառեալ կալ, s'obstiner, tenir ferme.

Յամառոտ V. Յամառ.

Յամառութիւն sm. entêtement, opiniâtreté, obstination, mutinerie; acharnement, ténacité; —ք, obstinément, avec opiniâtreté.

Յամբայր adv. téméraire-ment, courageusement.

Յամեմ, եցի. Յամենամ, եցայ vn. tarder, retarder, différer; attendre, patienter; յամեսցէ ինձ տեսանել զքեզ, il me tardera de vous revoir.

Յամեմ, եցի. Յամեցուցանեմ, ուցի va. retarder, différer, surseoir, remettre.

Յամոյր, մուրաց s. antilope.

Յամուրդ s. délai, retard.

Յամպար sm. ambre gris; bot. ambrette.

Յամր a. lent, tardif; adv. lentement, doucement.

Յամրագնաց a. qui marche lentement, avec lenteur; —ք s. tardigrades.

Յամրալեզու, Յամրախօս V. Դանդաղախօս.

Յամրանամ V. Յամեմ vn.

Յամրաշարժ a. qui se remue lentement.

Յամրաքայլ a. à pas lents, d'un pas lent; — ընթանալ, marcher lentement, à pas comptés.

Յամրընթաց a. qui marche lentement; s. roulage.

Յամրութիւն sm. lenteur; retardation, retardement.

Յայ s. huée; — կարդալ, յայ յոլ եւ հայ հուչ առնել, huer, pousser des huées.

Յայգորեմ V. Այգորեմ.

Յայթիհաս V. Այթիհ.

Յայլակարծուց V. Յանկարծակի.

Յայ յու V. Յայ.

**Յայնժամ** adv. alors, dans ce moment-là, en ce temps-là, à ce moment.

**Յայնժամու** a. d'alors, de ce temps-là.

**Յայնկոյս** prép. adv. au delà, de l'autre côté; — գետոյն, au delà du fleuve.

**Յայնմ ետէ** V. Ետէ.

**Յայնմ վայրի** V. Վայր.

**Յայն սակս** V. Սակս.

**Յայսկոյս** prép. adv. au deçà, en deçà de, de ce côté; — յայնկոյս, çà et là.

**Յայսմաւուրք, ուրց** s. légende, ménologe.

**Յայսմ ետէ** V. Ետէ.

**Յայսմ վայրի** V. Վայր.

**Յայս սակս** V. Սակս.

**Յայտ, ից** a. évident, clair, manifeste; adv. évidemment, clairement, manifestement; — առնել՝ առնել, déclarer, manifester, montrer ou déployer au grand jour, faire voir, trahir, exprimer, exposer, dénoter, signifier; — առնել զընդունելութիւն, accuser réception; — գալ, ի— գալ, se faire connaître, se montrer, paraître ou reparaître au jour, éclater; — իմն է, cela va sans dire, il va sans dire que, c'est clair; — է, — իսկ է, il est évident, il est clair; այս — է զի, il est certain que; ապա — ուրեմն է, il est donc évident.

**Յայտագոյն, Յայտական** a. évident, apparent, manifeste, clair, expressif, significatif.

**Յայտանախատ** adj. insulté en public; adv. en insultant publiquement; — առնել, insulter publiquement, devant tout le monde; — լինել, être insulté, injurié publiquement.

**Յայտանկատ** adj. visible, évident.

**Յայտանշան** a. expressif, significatif.

**Յայտանուն** a. dont le nom est connu, célèbre.

**Յայտապատկեր մարդոյ** s. portrait, statue humaine.

**Յայտապատում** a. raconté clairement, clair; — առնել, raconter clairement, exposer.

**Յայտարար, ից** adj. déclaratoire, distinctif, caractéristique; s. démonstrateur.

**Յայտարարութիւն** s. déclaration, manifestation, exposition, notification, exposé; manifeste; prospectus, programme; — առնել, faire une manifestion.

**Յայտնադիման** prép. devant, en face, en présence; adv. V. Յայտնապէս; a. évident, apparent; — ցուցանել, mettre en évidence.

**Յայտնադիմանակաց** adj. évident, notoire.

**Յայտնադիմանութիւն** sm. évidence, notoriété; —բ, évidemment.

**Յայտնաբան** a. qui éclaircit; clair, évident, expressif.

**Յայտնաբանեմ, եցի** va. rendre clair, éclaircir, expliquer, mettre en évidence.

**Յայտնաբանութիւն** s. éclaircissement, explication.

**Յայտնաբար** V. **Յայտնապէս**.

**Յայտնաբարբառ** a. déclaré, publié, annoncé, solennel; adv. clairement, distinctement, hautement; — վկայութիւն, témoignage éclatant; — խօսել, parler ouvertement.

**Յայտնագոյնս** V. **Յայտնապէս**.

**Յայտնական** V. **Յայտական**.

**Յայտնանախատ** V. **Յայտանախատ**.

**Յայտնապէս** adv. clairement, évidemment, manifestement, nettement, notoirement, expressément, hautement, publiquement, visiblement, ouvertement, à découvert, sans masque, sans voile.

**Յայտնատեսիլ** a. en vue, apparent, évident, public.

**Յայտնեմ**, եցի va. manifester, déclarer, exprimer, expliquer, exposer, énoncer, communiquer; découvrir, révéler, dévoiler, déceler, démasquer, déterrer; notifier, signifier, dénoter; — զմիտս՝ զկարծիս իւր, manifester ses intentions, sa pensée, se prononcer.

**Յայտնի**, նւոյ, նեաց a. évident, manifeste, clair, notoire, apparent, explicite, net, visible, patent, reconnaissable, connu; adv. V. **Յայտնապէս**; — է, il est clair, il est évident.

**Յայտնիչ** a. énonciatif.

**Յայտնութիւն** s. manifestation, énonciation; dévoilement, décèlement; révélation, Apocalypse; épiphanie, jour des rois.

**Յայրատ**, ից, ից a. lascif, obscène, impudique, lubrique, impudent, convoiteux, immodeste, déshonnête, effronté; adv. impudemment, impudiquement, lubriquement, immodestement, effrontément.

**Յայրատաբաց** a. qui a un air impudent, effronté.

**Յայրատահայեաց** a. qui a un regard impudique, lascif.

**Յայրատանամ**, ացայ. **Յայրատիմ**, տեցայ vn. se conduire impudiquement, être lascif.

**Յայրատատես** V. **Յայրատահայեաց**.

**Յայրատութիւն** sm. impudence, impudicité, obscénité, lubricité, lasciveté, déshonnêteté, immodestie, effronterie.

**Յանգ**, ից s. terme, fin, achèvement; rime, cadence, désinence; adj. convenable, conforme, approprié, propre, analogue; doux, agréable; — ելանել, finir, toucher à sa fin, se terminer, être mené à fin; — հանել, finir, mettre fin, venir à bout, terminer.

**Յանգագոյն** V. **Յանկագոյն**.

**Յանգակից** a. qui a de l'affinité avec, analogue.

**Յանգաշեշտ** V. **Շեշտոլոր**.

**Յանգաստեղծ**, իցս. rimeur.

**Յանգաւոր** V. **Յանգ** a.

**Յանգեմ**, եցի. **Յանգեցուցանեմ**, ուցի va. terminer,

finir; approprier, adapter, appliquer, accorder; rimer.

**Յանգիմ**, գեցայ vn. se terminer, finir; se terminer, aboutir à, tendre à, parvenir, se réduire, être réduit, résulter, avoir pour résultat; s'emboucher, se jeter.

**Յանգութիւն** s. affinité, rapport, convenance.

**Յանգուցանեմ**, ուցի va. attirer, s'attirer, captiver, charmer, engager, entraîner, attacher; calmer, apaiser; յինքն — զսիրտս, gagner, se concilier ou conquérir les cœurs; յինքն — զոք, gagner qn.

**Յանգուցիչ** adj. attrayant, attirant, engageant, insinuant.

**Յանգչիմ**, գեայ vn. cesser, se reposer; s'attacher, affectionner.

**Յանդգնաբար, Յանդգնաբոյս** adv. audacieusement, témérairement, hardiment.

**Յանդգնախօս** a. qui parle audacieusement.

**Յանդգնեցուցանեմ**, ուցի va. rendre audacieux, enhardir.

**Յանդգնիմ**, նեցայ va. avoir l'audace, la hardiesse ou le courage de, oser, s'enhardir.

**Յանդգնութիւն** s. audace, témérité, arrogance, présomption, hardiesse; —ի V. Յանդգնաբար.

**Յանդիման** prép. adv. devant, en présence, en face de, vis-à-vis de, à la face de, à la vue de; դէմ —, face à face; — ամենայն աշխարհի, en face de tout l'univers; — շրջատեսարանին, en plein amphithéâtre; — առնել, présenter, offrir, introduire; représenter, mettre sous les yeux, exprimer, montrer, faire voir, faire l'exposé de; reprocher; — լինել՝ կալ, se présenter, se représenter, comparaître; — կալ ուրուք, paraître devant qn.; — կացուցանել, faire paraître ou comparaître, présenter, représenter, montrer.

**Յանդիմանախօս** adj. qui parle en face, en présence.

**Յանդիմանական** a. manifeste, évident; de reproche.

**Յանդիմանակաց, ացս** adj. qui reste devant ou en face, présent.

**Յանդիմանակացութիւն** sm. présence.

**Յանդիմանամերժ** adj. qui repousse les reproches, insolent.

**Յանդիմանատես** adj. qui voit en face, qui voit clair.

**Յանդիմանաբար, ացս** sm. présentateur.

**Յանդիմանաբարութիւն** s. présentation.

**Յանդիմանաւոր** a. apparent, évident, clair.

**Յանդիմանեմ**, եցի va. gronder, reprocher, réprimander, reprendre, gourmander, invectiver, bougonner; présenter, représenter, montrer, faire voir, découvrir; prouver, convaincre; —իմ vn. être grondé; être présenté; être convaincu.

Յանդիմանիչ s. qui reproche, grondeur; qui découvre, qui montre.

Յանդիմանութիւն sm. reproche, remontrance, réprimande, répréhension, invective, gronderie; présentation, représentation; démonstration, preuve, manifestation, exposition, exposé.

Յանդուգն, դգունք a. audacieux, téméraire, arrogant, hardi, résolu, déterminé; adv. audacieusement, hardiment, témérairement, à corps perdu.

Յանզգայիմ V. Անզգայիմ.

Յանիրաւի adv. injustement, iniquement, à tort.

Յանկ V. Յանգ.

Յանկարծ adv. subitement, soudainement, à l'improviste, tout à coup, inopinément, soudain, au dépourvu; interj. plût à Dieu! plût au ciel! plaise à Dieu! — եթէ, si par hasard.

Յանկարծաբուղխ a. jailli soudainement.

Յանկարծագիւտ a. trouvé par hasard, soudainement.

Յանկարծագոյն V. Յանկարծ adv.

Յանկարծագործ a. qui se fait subitement.

Յանկարծադէպ adj. qui se rencontre à l'improviste, inattendu, inopiné, imprévu, inespéré, fortuit, accidentel.

Յանկարծաձափ adv. tout à coup, subitement, précipitamment, impétueusement, rapidement.

Յանկարծախօս s. improvisateur.

Յանկարծախօսեմ, եցի vn. improviser.

Յանկարծախօսութիւն s. improvisation.

Յանկարծաճագ a. qui éclôt, qui paraît tout à coup.

Յանկարծածին a. qui est né tout à coup, inopinément.

Յանկարծական a. inopiné, imprévu, inattendu.

Յանկարծակի V. Յանկարծ adv.

Յանկարծահաս a. qui arrive inopinément, imprévu, inattendu; — շտապ տագնապի՝ երկիւղ, terreur panique.

Յանկարծամահ adj. mort subitement; s. mort subite; — լինել, mourir subitement, d'une mort subite.

Յանկարծերեւեաց a. qui se fait voir subitement.

Յանկարծոյն, Յանկարծուստ, Յանկարծօրէն V. Յանկարծ adv.

Յանկաւոր, Յանկութիւն, etc. V. Յանգաւոր, Յանգութիւն, etc.

Յանկուցանեմ, etc. V. Յանգուցանեմ, etc.

Յանկչիմ V. Յանգչիմ.

Յանձանձանք, նաց s. soin, sollicitude; gestion, expédition.

Յանձանձեմ, եցի va. soigner, avoir soin; gérer, gouverner, régler, traiter, expédier.

Յանձանձիչ s. qui a soin, qui gère, gérant.

Յանձն առնել՝ առնուլ՝ լինել V. Անձն.

Յանձնաժողով. ոյ s. commission; — կարգել, établir, nommer une —; անդամք—ոյ, les membres de la —.

Յանձնապաստան, աց, իք a. présomptueux, confiant, suffisant; — լինել, présumer trop ou avoir une trop haute opinion de soi-même, se fier trop, compter trop sur soi.

Յանձնապաստանութիւն s. présomption, suffisance.

Յանձնառական adj. acceptable; accepté, avoué,

Յանձնառու, աց s. commissionnaire.

Յանձնառութիւն s. acceptation, engagement, consentement.

Յանձնավարձք, ձուց s. commission (salaire).

Յանձնարար, աց s. commettant.

Յանձնարարական adj. de commission, de recommandation; — ժողով, commission; — ծուղթ, lettre de recommandation.

Յանձնարարութիւն s. commission, commande; recommandation; mission.

Յանձնարարեմ, եցի va. commissionner.

Յանձնել, աց s. commande; — առնել, faire une —.

Յանձնեմ, եցի va. recommander; confier à, remettre à, déposer entre les mains, chez qn., mettre en dépôt.

Յանձնկալութիւն s. acceptation.

Յանսենականութիւն s. jansénisme.

Յանսենեան s. janséniste.

Յանց, ից s. faute, péché.

Յանցական a. coupable, sujet à pécher, à faillir.

Յանցանեմ, գեայ, ցուցեալ vn. commettre ou faire une faute, un crime, une erreur, transgresser, prévariquer, attenter, être coupable, avoir tort, pécher, faillir, manquer, violer, contrevenir.

Յանցանք, նաց s. faute, tort, délit, crime, erreur, chute; իմովս—նօք, par ma faute; *—ն իմ չէ, la faute n'est pas à moi; *—ն իմ է, la faute est à moi; *իմ —ս է, c'est ma faute; յանցանս ինձ արկանել զմեք, faire un crime à qn. de qch.

Յանցաւոր, աց a. coupable, criminel; — օրինաց, prévaricateur, transgresseur, violateur; — զանձն դաւանել՝ խոստովանել, s'avouer coupable.

Յանցաւորութիւն s. culpabilité.

Յանցեմ V. Յանցանեմ.

Յանցեցուցիչ V. Յանցուցիչ.

Յանցուած, ոց. Յանցութիւն, Յանցումն sm. transgression, faute, prévarication.

Յանցուցանեմ, ուցի va. faire commettre une faute; faire pécher.

Յանցուցիչ a. qui fait commettre une faute, un péché.

Յանօթ առնուլ, emprunter; — տալ, prêter.

Յաշտ, ից s. sacrifice fait aux idoles.

Յաշտածին adj. né d'un sacrifice.

Յաչաղանք, նաց s. envie, jalousie, malveillance.

Յաչաղեմ, եցի vn. envier, être jaloux de, voir d'un œil envieux; dénigrer par une basse jalousie, attaquer par malveillance.

Յաչաղկոտ, աց a. envieux, jaloux, malveillant.

ՅաչաղուԹիւն, Յաչաղումն V. Յաչաղանք.

ՅապաԹով adj. sûr, assuré.

ՅապաԹովագրեմ, եցի va. com. assurer.

ՅապաԹովագրող s. assureur.

ՅապաԹովագրուԹիւն s. assurance.

ՅապաԹովանամ, ացայ vn. être sûr, certain, s'assurer, être rassuré, avoir la certitude.

ՅապաԹովացուցանեմ, ուցի. ՅապաԹովեմ, եցի va. assurer, rassurer, donner pleine garantie, mettre en sûreté.

ՅապաԹովուԹիւն s. sûreté, assurance, certitude, garantie.

Յապաղանք, նաց s. retard, délai, ajournement.

Յապաղեմ, եցի va. retarder, différer, ajourner; remettre, prolonger par des délais, surseoir, temporiser, proroger, suspendre; vn. V. Յապաղիմ.

Յապաղեցուցանեմ V. Յապաղիմ va.

Յապաղեցուցիչ a. qui retarde.

Յապաղիմ, ղեցայ vn. tarder, retarder, se faire attendre, être en retard.

Յապաղիչ adj. qui retarde prorogatif, suspensif.

Յապաղկոտ, աց a. tardif, temporiseur, retardataire.

ՅապաղուԹիւն, Յապաղումն s. retard, délai, temporisation, prorogation.

Յապայ, առ. —, adv. après, ensuite.

Յապաւանք, նաց s. retranchement, suppression, diminution.

Յապաւեմ, եցի va. retrancher, élaguer, rogner, réduire, diminuer, supprimer.

Յապաւումն V. Յապաւանք.

Յապուրակի adv. à la hâte, à l'improviste.

Յաջող a. favorable, propice, prospère, avantageux; —է, il est —; il est temps, il convient.

Յաջողաբախտ a. chanceux, heureux.

Յաջողակ, աց a. adroit, habile, capable, industrieux, apte; V. Յաջող; Ձեռն.

Յաջողակաբար adv. adroitement, habilement, d'une manière habile, avec adresse.

ՅաջողակուԹիւն s. habileté, adresse, dextérité, aptitude.

Յաջողեմ, եցի va. faire réussir, faire prospérer, mettre en bon chemin, favoriser; agir, opérer, effectuer; յաջողեաց մեզ ըստ բախտի տեսանել, nous fûmes assez heureux pour voir; —իմ vn. réussir, avoir

du succès, prospérer, prendre, avoir un heureux succès, venir à bout, faire son chemin, atteindre son but, parvenir; — իվեր քան զակնկալութիւն՝ քան զկարծիս, réussir contre toute espérance; չ—, ne pas réussir, manquer son coup, se casser le nez.

Յաջողուած V. Յաջողութիւն.

Յաջողութիւն sm. réussite, prospérité, succès, chance; action, efficacité, vertu, force; —ք, avec succès; sans peine; — իդեպ գալ ումեք, être favorisé; — ըստ բաղդի լեալ նմա, heureusement pour lui, il a eu la chance, le bonheur de.

Յաջողումն V. Յաջողութիւն; —տալ, faire réussir.

Յաջորդ, ող s. successeur; a. suivant, postérieur, subséquent.

Յաջորդաբար adv. successivement, consécutivement.

Յաջորդական a. successif, consécutif.

Յաջորդեմ, եցի va. faire succéder; vn. succéder.

Յաջորդիմ, դեցայ vn. succéder, suivre, s'ensuivre.

Յաջորդութիւն s. succession, suite; — աղետից՝ եղեռնութեանց, enchaînement de maux, de crimes; — իրաց, suite des affaires.

